Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի ղեկավարի
2024թ. հունվարի 26-ի N 2-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք. Երևան, 0009, Կորյուն փողոց 15, կայք՝ http://www.ecoinspect.am/
☎ հեռ. (015) 48-48-48, Էլ. փոստ՝ info@ecoinspect.gov.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ **4**

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ **5**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ **5-7**

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ **7-12**

2023 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ 2021-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ **12-18**

ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ **18-19**

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐ **19**

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ, ՔԱՆԱԿԸ, ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ՀԻՄՔԵՐԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ **20**

Հրապարակված ստուգումներ *20*

292 հանձնարարագրով տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ոլորտները *20-22*

Ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ 2023 թվականի 155 ստուգմների տարեկան ծրագրով նախատեսված 155 ստուգումներ *22-24*

2023 թվականի արտածրագրային 137 ստուգումից *24-25*

137 հանձնարարագրերի հրապարակման հիմքերը *25-26*

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ **27**

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԸՏՄ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ **28**

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ **28-29**

Բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ուղղություն *29*

Իրականացվել են ստուգումներ *29-30*

Ստուգումներով հայտնաբերված խախտումներ *30*

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն *30-32*

Կանխարգելիչ գործողություններ *32*

Կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության ուղղություն *32-33*

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն *33-34*

Կանխարգելիչ գործողություններ *34-35*

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ *35-36*

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը վերահսկողության ընթացքում *36*

Վերապատրաստման դասընթացներ *36*

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ, ՋՐԵՐԻ, ՀՈՂԵՐԻ, ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ **36-37**

Մթնոլորտային օդի պահպանության ուղղությունով *38*
Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները *38-39*
Կանխարգելիչ միջոցառումներ *39-40*
Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ *40-41*
Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ուղղությունով *42*
Ջրօգտագործում իրականացնող ընկերությունների մոտ առավել հաճախ արձանագրված խախտումներն են *42-44*
Կանխարգելիչ միջոցառումներ *44*
Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոնների ուղղությունում *44-45*
Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները *45-46*
Թափոնների և վտանգավոր նյութերի գործածության ոլորտի վերահսկողության արդյունքներով հիմնական խնդիրներն են *46*
Հողերի օգտագործում և պահպանություն ուղղությունով արձանագրվել է *46-47*
Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները *47*
Կանխարգելիչ գործողություններ *47*
Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ուղղությունով *48*
Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների և վիճակագրական հաշվետվությունների ուղղություններով *48*
ՀՀ վարչապետի հանձնարարականներ *48-49*
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 49-51
Ընդհանուր վերահսկողական արդյունքներ *51-52*
Ստուգումների արդյունքներ *52*
Ընդերքի շահագործման վերահսկողության ուղղությամբ *52-53*
Հանքային ջրերի և երկրաբանական ուսումնասիրությունների վերահսկողության ուղղությամբ *53-54*
Հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի վերաբերյալ *54-58*
Արաքսի ավազանում իրականացված ստուգումների վերաբերյալ *58-59*
Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ իրականացված ստուգումներ *59-60*
Հաճախ հանդիպող խախտումները *60-62*
Մետաղական հանքավայրերի վերահսկողություն *62*
Հանքավայրերի վերահսկում *62-63*
Առաջարկված օրենսդրական փոփոխությունները *63-64*
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 64-65
Կատարված հետազոտությունները՝ ըստ 2021-2023 թվականների համեմատականի *66*
Լաբորատոր հագեցվածության ապահովում *66-68*
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 68-72
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ..... 72-73
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ 73-82

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 82-85
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ 85
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 85
ԲԸՏՄ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՎԱԾ ԳՈՐԾԵՐ 86-91
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ 92-95
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԵՎ ԱՎԱՐՏՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 95-96

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Խորհուրդ	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդ
Գրասենյակ	Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
ԲԸՏՄ	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
ՋՄՀԹՎՆՎՎ	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն
ԸՎՎ	Ընդերքի վերահսկողության վարչություն
ԿՎՎ	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն
ՌԳՎՎ	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն
ԻԱՓՎ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ԻՀՀՏԱԲ	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
ԼՀԲ	Լաբորատոր հետազոտությունների բաժին
ՏԲ	Տարածքային բաժին
ՍԹԱ	Սահմանային թույլատրելի արտանետում
Ծրագիր	Տարեկան գործունեության ծրագիր
ՕՊՕ	Օդի պահանջվող օգտագործում
ՋՕԸ	Ջրօգտագործողների ընկերություն

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն տարեկան հաշվետվությունը (այսուհետև՝ Հաշվետվություն) ներկայացվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշմամբ հաստատված ԲԸՏՄ-ի կանոնադրության պահանջների:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ԲԸՏՄ իրականացրել է ստուգումներ (այդ թվում նաև՝ առաձնահատուկ ստուգումներ), դիտարկումներ և վարչական վարույթներ, այդ թվում՝ կիրառել է պատասխանատվության միջոցներ բնապահպանության ու ընդերքի ոլորտներում, ձեռնարկել է միջոցներ վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման հետևյալ ուղղություններով՝

- մթնոլորտային օդի պահպանություն
- ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն
- հողերի օգտագործում և պահպանություն
- ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն
- կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն
- վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ
- պետական փորձաքննություն
- բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ
- վիճակագրական հաշվետվություններ

ԲԸՏՄ-ի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը:

ԲԸՏՄ-ի խնդիրներն են՝

- բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը.
- շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ ԲԸՏՄ-ի համար սահմանվել է թվով 194 հաստիք, որից ներկայումս 35-ը՝ թափուր:

ԲԸՏՄ-ի լիազորությունների իրականացման նպատակով 2023 թվականի կտրվածքով իրականացվել է 1,119,258,400 ՀՀ դրամի բյուջետային հատկացում՝ կատարողականը կազմում է 99,3%: Նախորդ երկու տարիների կտրվածքով ՀՀ պետական բյուջեի հատկացումները ներկայացված են *Աղյուսակ 1-ում*:

Աղյուսակ 1

ԲԸՏՄ 2023 թվականի բյուջեի համեմատականը նախորդ երկու տարիների հետ			
Հոդվածի անվանումը	*2021*	*2022*	*2023*
	հազար ՀՀ դրամ	*հազար ՀՀ դրամ*	*հազար ՀՀ դրամ*
Ընդամենը՝ ԲԸՏՄ, այդ թվում՝	881,040.3	919,632.2	1,119,258.4
Ընթացիկ	872,610.3	916,632.2	1,061,128.4
Կապիտալ	8,430.0	3,000.0	58,130.0

2021 թվականի կատարողականը կազմում է 97,2%, իսկ 2022 թվականի կատարողականը կազմում է 95,5%:

2023 թվականի բյուջեով հաստատված հիմնական աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատականը փաստացի վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատությունը ներկայացված են *Աղյուսակ 2-ում*:

Աղյուսակ 2

2023 թվականի բյուջեով հաստատված հիմնական աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատականը փաստացի վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատությունը			
Քաղաքացիական ծառայության պաշտոններ	*Սահմանված միջին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների չափը*	*Վճարված միջին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների չափը*	*Սահմանված և վճարված միջին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների տոկոսային տարբերությունը*
Ղ-3	528,153	617,500	16.9
Ղ-4	435,344	514,400	18.2
Մ-2	359,756	392,700	9.2
Մ-4	254,508	258,400	1.5
Մ-6	187,532	221,600	18.2

ԲԸՏՄ 2023 թվականի բյուջեով հաստատված *«Աշխատավարձեր և հավելավճարներ, պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ»* հոդվածներով խնայված *(թափուր հաստիքներ)* գումարները բաշխվել են աշխատակիցներին՝ աշխատանքային պարտականությունները բարեխիղճ և պատշաճ կատարելու համար:

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարեկան գործունեությունն իրականացվել է՝ առաջնորդվելով ԲԸՏՄ-ի կառավարման խորհրդի կողմից 2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 07-Լ որոշումով հաստատված 2023 թվականի տարեկան գործունեության ծրագրով:

2023 թվականի 15 միջոցառումների կատարման վերաբերյալ ներկայացվում է *Աղյուսակ 3-ում*:

Աղյուսակ 3

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ընթացքը
1	*2*	*3*	*4*
1	Մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների գործածության, սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ոլորտային ուղղություններում ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 38 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	Հրապարակվել է 155 հանձնարարագիր, որից 3-ը ուժը կորցրած է ճանաչվել
		թվով 43 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
		թվով 42 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
		թվով 32 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
2	ԲԸՏՄ-ի վերահսկողության էլեկտրոնային համակարգի ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքի մշակում, վերահսկողության համակարգի ստեղծում՝ համապատասխան էլեկտրոնային ծրագրի և սարքավորումների ապահովմամբ:	Վերահսկողության արդյունավետության, հաշվետվողականության, թափանցիկության բարձրացում	Ռիսկերի վրա հիմնված էլեկտրոնային միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությունից՝ Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից ԷԿԵՆԳ-ի հետ համատեղ իրականացվել են ԲԸՏՄ-ի տվյալների գույքագրման և քարտեզագրման նախնական աշխատանքներ:

3	Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումներ	Սիգ տեսակի ձկան վերարտադրության ապահովում և կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	ՇՄ, ՆԳՆ, Գեղարքունիքի մարզպետարանի հետ համատեղ 15-12-2022 թ-ից մինչև 20-01-2023 թ-ը և 18-12-2023 թ-ից մինչև 20-01-2024 թ-ը
4	Կենդանիների վերարտադրության և որսի թույլտվության ժամանակահատվածում ապօրինի որսորդության դեմ անցկացվող միջոցառումներ (ստուգայցեր, շրջայցեր)	Կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	ԲԸՏՄ ղեկավարի 09-02-2023 թվականի թիվ Կ 83-Ա հրամանի հիման վրա, ինչպես նաև բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով
5	Հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման միջոցառումները	Հողի բերրի շերտի ապօրինի օգտագործման կանխարգելում	ԲԸՏՄ ղեկավարի 07-04-2023 թվականի թիվ Կ 30-Ա հրամանի հիման վրա ստեղծվել է աշխատանքային խումբ
6	Ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման միջոցառումները	Տեղափոխվող փայտանյութի ապօրինի օգտագործման կանխարգելում	ԲԸՏՄ ղեկավարի 09-02-2023 թվականի թիվ Կ 83-Ա հրամանի հիման վրա, ինչպես նաև բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով
7	Անթափանց ծածկի սորուն նյութերի տեղափոխման միջոցառում	Բեռնատար ավտոմեքենաների անթափանց ծածկոցների բացակայության հայտնաբերում և տեղափոխվող սորուն նյութերի շրջակա միջավար թափվելու կանխարգելում	ՀՀ տարածքում պարբերաբար իրականացվել են ավտոտրանսպորտային միջոցներով առանց փոշու համար անթափանց ծածկի սորուն նյութերի տեղափոխման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ
8	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ԲԸՏՄ-ի անձնակազմի մարկշեյդերական գործի ուսուցում:	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	10 աշխատակիցներ մասնակցել են «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համայսարան» հիմնադրամի հետ 17.10.2023թ. կնքված ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-23/40-1 պայմանագրի

			շրջանակներում Agisoft Metashape-ի և 3DFlow ծրագրերի ուսուցում, հնարավորությունների կիրառում՝ ընդերքի օգտագործման վերլուծության մեջ, ծավալների հաշվարկում, ֆիզիկական չափսերի, մոդելների արտահանում:
9	Անօդաչու թռչող սարքերի կիրառման համար անհրաժեշտ ծրագրերի և վերլուծական գործիքների ուսուցում:	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	4 աշխատակիցներ մասնակցել են Երևանի ավիամոդելավորման դպրոցում կազմակերպվող կոպտերների հեռակառավարման դասընթացին, ինչպես նաև 17.10.2023թ. կնքվել է ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-23/40-1 պայմանագիրը «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համայսարան» հիմնադրամի հետ
10	ՀՀ կառավարության 2019 թվականի N 1423-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում:	19.01.2023թ. թիվ 01/016/5/246-2023 և 15.06.2023թ. թիվ 01/29.6/4/2885-2023 գրություններով Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ է ներկայացվել ԲԸՏՄ-ի կարծիքը
11	ՀՀ կառավարության 1999 թվականի «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշման մեջ փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների հաշվառման ենթակա կազմակերպություններին հաշվառելու ընթացակարգի հստակեցում:	19.01.2023թ. թիվ 01/016/5/246-2023 գրությամբ Շրջակա միջավայրի նախարարությանն է ներկայացվել ԲԸՏՄ-ի կարծիքը

12	ՀՀ կառավարության 2003 թվականի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1110-Ն որոշման մեջ փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	Տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներից ջրառի իրականացման համար վնասի հաշվարկման գործընթացի վերանայում	Շահագրգիռ մարմինների հետ իրականացված քննարկումների արդյունքներով ներկայացված առաջարկությունների պատասխանների բացակայության պատճառով թիվ 1110-Ն որոշման մեջ փոփոխությունները գտնվում է համաձայնեցման փուլում
13	«Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	Թափոնների պահման ժամկետների հստակեցում	26.04.2023թ. թիվ 01/007/6/1921-2023 գրությամբ Շրջակա միջավայրի նախարարությանն է ներկայացվել ԲԸՏՄ-ի կարծիքը
14	ՀՀ կառավարության 2005 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 2410-Ն որոշման մեջ փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից արտանետվող վնասակար նյութերի չափման ընթացակարգի վերանայում:	14.06.2023թ. թիվ 01/29.6/4/2873-2023 գրությամբ ԲԸՏՄ առաջարկություն է ներկայացվել Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ, որի հիման վրա Գրասենյակում տեղի են ունեցել քննարկումներ՝ փոփոխությունները ընթացքի մեջ են
15	ՀՀ կառավարության 2005 թվականի «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 91-ն որոշման մեջ փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	Ոչ համասեռ աղտոտման գոտու աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցների որոշում:	18.05.2023թ. թիվ 01/29.1/4/2297-2023 գրությամբ ԲԸՏՄ առաջարկություն է ներկայացվել Շրջակա միջավայրի նախարարություն և Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ՝ փոփոխությունները ընթացքի մեջ են

Համաձայն 2023 տարեկան գործունեության ծրագրի նպատակների՝ ԲԸՏՄ օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացրել է բնապահպանության և ընդերքի

ոլորտներում ռիսկերի կառավարում և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելման կամ նվազեցման համար:

Վերոնշյալ նպատակների իրագործման առնչությամբ իրականացվել են վերահսկողական գործառույթներ (ստուգումներ (այդ թվում առանձնահատուկ ստուգումներ), դիտարկումներ և վարչական վարույթներ), ինչպես նաև կանխարգելիչ, իրազեկման և խորհրդատվական միջոցառումներ:

2023 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ 2021-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրականացված վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթների արդյունքում արձանագրվել է ընդհանուր 2544 իրավախախտման դեպք, որը 2022 թվականի համեմատությամբ աճել է 6,3%, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ 22,1%:

Վերահսկողության ուղղություններով նախորդ երկու տարվա իրավախախտումների դեպքերի համեմատականով արձանագրվել են առավել բարձր ռիսկային ուղղություններ, որոնց քանակական և տոկոսային արտահայտումը ներկայացված է *Աղյուսակ 4-ում*:

Աղյուսակ 4

Հայտնաբերված իրավախախտումների թվի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների							
Հ/Հ	*Ուղղությունները*	*2021*		*2022*		*2023*	
		քանակ	*%*	*քանակ*	*%*	*քանակ*	*%*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	1068	51.3	755	31.5	869	34.2
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	95	4.6	142	5.9	155	6.2
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	141	6.8	179	7.5	329	12.9
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	110	5.3	99	4.1	161	6.3
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	71	3.4	281	11.7	199	7.8
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	120	5.8	108	4.5	130	5.1
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	84	4.0	487/163*	20.3	175	6.9
8	**Վիճակագրական հաշվետվություններ**	338	16.2	279	11.7	473	18.6
9	**Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)**	49	2.4	46	1.9	42	1.6
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	7	0.3	17	0.7	11	0.4
ԸՆԴԱՄԵՆԸ		**2083**	**100**	**2393**	**100**	**2544**	**100**

* Ընդերքօգտագործում և պահպանություն ուղղությամբ 2022 թվականին ներկայացված թիվը 487 իր մեջ թյուրիմացաբար ներառել է հանքարդյունահանման օբյեկտներում իրականացված վերահսկողական գործողությունների արդյունքում հայտնաբերված մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, արտադրության ու սպառման թափոնների, հողերի օգտագործման և պահպանության ուղղություններում հայտնաբերված իրավախախտումները, որոնք նաև հաշվարկվել և ներկայացվել էին վերը նշված ուղղություններում, իսկ ընդերքօգտագործում և պահպանություն ուղղության 2022 թվականի

իրավախախտման թիվը 163 է: 2020, 2021 և 2023 թվականներին հաշվարկված և ներկայացված թիվը իր մեջ չի ներառել նշված ուղղություններում հայտնաբերված իրավախախտումները:

Վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրված իրավախախտումների հիմքով հարուցվել է 1,352 վարչական վարույթ, որից 211-ը միայն ստուգումներով: Վարչական վարույթները հարուցվել են ԲԸՏՄ-ի նախաձեռնությամբ, ՀՀ վարչապետի հանձնարարականների, Պետական եկամուտների կոմիտեի, Տեղական ինքնակառավարման, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների, ահազանգերի և այլ հիմքերով: ԲԸՏՄ-ի կողմից վարչական վարույթների քանակը նախորդ երկու տարվա համեմատականով ներկայացված է *Աղյուսակ 5-ում*:

Աղյուսակ 5

Ժամանակահատվածը	**Հարուցված վարչական վարույթների**	
	քանակը	*որից՝ ստուգումներով*
2021	1,025	178
2022	930	241
2023	1,352	211

Համաձայն այդ տվյալների 2023 թվականին հարուցված ընդհանուր վարչական վարույթների թիվը 2022 թվականի համեմատությամբ աճել է 45,4%, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ 31,9%, իսկ միայն ստուգումներով վարչական վարույթների թիվը 2022 թվականի համեմատությամբ նվազել է 12,5%, իսկ 2021 թվականի համեմատությամբ աճել է 18,5%:

Հարուցված վարչական վարույթների արդյունքում վարչական տույժի են ենթարկվել 872 անձ, որոնց նկատմամբ կիրառվել է թվով 1,116 վարչական տույժ: Նախորդ երկու տարվա համեմատականը կիրառված տույժերի քանակի և վերահսկողական ուղղությունների առնչությամբ ներկայացված է *Աղյուսակ 6-ում*:

Աղյուսակ 6

ԲԸՏՄ-ի կողմից կիրառված վարչական տույժերի քանակի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	*ՈՒղղությունները*	*2021*	*2022*	*2023*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	272	218	208
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	45	28	42
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	135	154	216
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	107	80	112
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	67	87	99
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	66	63	73
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	75	86	51
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	324	253	258
9	**Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)**	46	40	47
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	7	13	10
ԸՆԴԱՄԵՆԸ		**1,144**	**1,022**	**1,116**

Համաձայն այդ տվյալների 2023 թվականին կիրառված վարչական տույժերի թիվը 2022 թվականի համեմատությամբ աճել է 9,2 %, իսկ 2021 թվականի համեմատությամբ նվազել՝ 2,4 %:

ԲԸՏՄ-ի կողմից կիրառված վարչական տույժերի քանակը համեմատելով նախորդ երկու տարիների հետ՝ ըստ բուսական աշխարհի օգտագործում և պահպանության ու սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ուղղությունների տվյալների, ակնառու է, որ դրանց նվազումը պայմանավորված է իրավապահ մարմիններին ուղարկված գործերի քանակի աճով *(տե՛ս Աղյուսակ 10)*, որի վերաբերյալ իրավապահ մարմիններից տարվա ընթացքում դեռ չենք ստացել գործի լուծման

արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն, իսկ տնտեսավարող սուբյեկտների հետ իրականացված տարբեր կանխարգելիչ միջոցառումները տվել են իրենց դրական արդյունքը՝ հաշվետվությունները ժամանակին ներկայացման մասով:

Հարուցված վարչական վարույթների արդյունքում նշանակված վարչական տուգանքի չափը կազմել է 135,750,000 ՀՀ դրամ: Նախորդ երկու տարվա համեմատականը ըստ առավել ռիսկային ուղղությունների ներկայացված է *Աղյուսակ 7-ում*:

Աղյուսակ 7

ԲԸՏՄ-ի կողմից կիրառված վարչական տուգանքի գումարի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	*Ուղղությունները*	*2021*	*2022*	*2023*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	28,780,000	22,340,000	20,550,000
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	4,100,000	2,970,000	3,570,000
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	11,430,000	13,000,000	26,000,000
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	19,820,000	22,230,000	45,850,000
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	3,220,000	4,700,000	4,840,000
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	4,860,000	5,360,000	5,910,000
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	7,070,000	8,130,000	5,550,000
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	19,810,000	16,360,000	17,550,000
9	**Պետական փորձաքննություն**	3,750,000	3,520,000	4,980,000
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	650,000	550,000	950,000
ԸՆԴԱՄԵՆԸ		**103,490,000**	**99,160,000**	**135,750,000**

Համաձայն այդ տվյալների 2023 թվականի ընթացքում նշանակված տուգանքի չափը 2022 թվականի համեմատությամբ աճել է 36,9%, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ 31,2%:

Վերահսկողական աշխատանքների արդյունքում հաշվարկվել է պատճառված 5,176,182,531 ՀՀ դրամ գումարի չափով վնաս, որից՝

- իրականացվել է 1,477 շրջակա միջավայրին վնասի հաշվարկ՝ 3,375,263,915 ՀՀ դրամ վնաս (ստուգումներով՝ 1,864,802,177 ՀՀ դրամ)
- պետությանը պատճառված՝ 1,800,918,616 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Նախորդ երկու տարվա համեմատականը ըստ առավել ռիսկային ուղղությունների ներկայացված է *Աղյուսակ 8-ում և 9-ում*:

Աղյուսակ 8

ԲԸՏՄ-ի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկի քանակի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	*Ուղղությունները*	*2021*	*2022*	*2023*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	1,040	696	1,143
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	73	99	106
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	37	45	51
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	18	26	33
5	**Հողերի օգտագործում և պահպանություն**	98	82	144
6	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	1	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ		**1,267**	**948**	**1,477**

Աղյուսակ 9

ԲԸՏՄ-ի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին և պետությանը պատճառված վնասի համեմատականը նախորդ երկու տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	*Ուղղությունները*	*2021*	*2022*	*2023*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	1,004,640,274	893,690,284	1,249,854,084
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	11,705,590	19,823,560	23,530,349
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	48,678,079	198,171,172	180,863,753
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	632,870,525	94,974,272	1,638,276,029
5	**Հողերի օգտագործում և պահպանություն**	213,172,424	61,361,290	282,739,700
6	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	60,000,000	0	0
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	0	961,178,695	1,800,918,616
ԸՆԴԱՄԵՆԸ		**1,971,066,892**	**2,229,199,273**	**5,176,182,531**

Համաձայն այդ տվյալների 2023 թվականի ընթացքում հաշվարկված վնասի գումարի չափը 2022 թվականի համեմատությամբ աճել է 132,2%, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ 162,6%: ԲԸՏՄ կողմից իրականացված վերահսկողական գործողությունների արդյունքում ընդերքօգտագործում և պահպանության ողղությունում հայտնաբերված ապօրինի արդյունահանված օգտակար հանածոյի ծավալներով նախորդ տարվա համեմատ աճել է 87,4%-ով:

ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողական աշխատանքների արդյունքում իրավապահ մարմիններին ուղարկվել է 900 գործի նյութ՝ 1,314,902,307 ՀՀ դրամ շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկով: Նախորդ երկու տարվա տվյալները ներկայացված է *Աղյուսակ 10-ում*:

Աղյուսակ 10

Իրավապահ մարմիններին ուղարկված նյութերի քանակի համեմատականը նախորդ երկու տարիների հետ		
Ժամանակահատվածը	*Քանակը*	*Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը*
2021	883	1,263,684,788
2022	661	944,178,108
2023	900	1,314,902,307

Համաձայն այդ տվյալների 2023 թվականի ընթացքում իրավապահ մարմիններին ուղարկված գործերի քանակը 2022 թվականի համեմատությամբ աճել է 36,1%, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ 1,9%:

Հարկ է նշել, որ 2023 թվականի ընթացքում ՀՀ իրավապահներին ուղարկված նյութերից թվով 823-ը միայն ապօրինի ծառահատման և փայտանյութի ձեռքբերման վերաբերյալ գործերն են՝ շրջակա միջավայրին պատճառված 1,181,527,517ՀՀ դրամ վնասի չափով:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐ

- 2021 թվականի ընթացքում մուտքագրվել է 125,698,722 ՀՀ դրամ
- 2022 թվականի ընթացքում մուտքագրվել է 314,561,597.80 ՀՀ դրամ
- 2023 թվականին ընթացքում մուտքագրվել է 143,868,695.2ՀՀ դրամ

2023 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի մուտքերը 2022 թվականի համեմատությամբ նվազել է 54,3%, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ 14,5%: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ուղարկվել 240 որոշում 49,593,619 ՀՀ դրամի բռնագանձման պահանջով:

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ, ՔԱՆԱԿԸ, ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ՀԻՄՔԵՐԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ստուգումներն իրականացվել են ԲԸՏՄ-ի կառավարման խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 12-Լ որոշմամբ հաստատված ստուգումների տարեկան ծրագրով, ՀՀ վարչապետի հանձնարարականներով, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների հիմքերով:

Հրապարակված ստուգումներ

ԲԸՏՄ-ի ղեկավարի կողմից տրված 292 հանձնարարագրով (թվով 20-ը 2022 թվականից տեղափոխված) իրականացված ստուգումներից՝

- 274-ն ավարտվել է, 13-ը տեղափոխվել է 2024 թվական, իսկ 5 հանձնարարագիր ուժը կորցրած է ճանաչվել,
- կայացվել է վարչական տույժի 426 որոշում,
- կիրառվել է վարչական տույժ՝ 57,900,000 ՀՀ դրամի չափով,
- հաշվարկվել է 3,665,720,493 ՀՀ դրամ վնաս, որից՝ 1,864,802,177 ՀՀ դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս և պետությանը պատճառված՝ 1,800,918,616 ՀՀ դրամ (ԲԸՏՄ-ի կողմից ներկայացված ծավալային ակտերի հիման վրա հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից),
- կազմվել է 243 ակտ և 31 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք,
- տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 128 պարտադիր կատարման հանձնարարական, որից 64-ը կատարվել է:

292 հանձնարարագրով տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ոլորտները

- ընդերքօգտագործում – 78
- էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում - 10
- անտառային տնտեսություններ - 5

- բնության հատուկ պահպանվող տարածքներ - 1
- ձկնաբուծություն - 18
- արտադրություն - 58
- ջրօգատագործում - 33
- թափոնների տեղադրում և ոչնչացում - 31
- շինարարություն – 34
- ռեստորաններ և հյուրանոցներ – 15
- զվարճությունների և հանգստի կազմակերպում - 1
- անասնաբուծություն և բուսաբուծություն – 2
- պետության կառավարում և հասարակության սոցիալ-տնտեսական քաղաքականություն – 6

Աղյուսակ 11

Ընդհանուր ստուգումների կատարողականի համեմատականը նախորդ երկու տարիների հետ			
	2021	*2022*	*2023*
Հանձնարարագրերի քանակը, որից	**257**	**267**	**292**
նախորդ տարվանից տեղափոխված	33	16	20
հաշվետու ժամանակահատվածում հրապարակված	224	251	272
Հանձնարարագրերի կատարողական, որից	**257**	**267**	**292**
ուժը կորցրած	28	6	5
ավարտված ստուգումներ	213	241	274
հաջորդ տարի տեղափոխված	16	20	13

Աղյուսակ 12

Ընդհանուր ստուգումներով կայացված որոշումների և տրված պարտադիր կատարման հանձնարարականների կատարողականի համեմատականը նախորդ երկու տարիների հետ					
Տարեթիվ	*Վարչական որոշումների քանակ*	*Վարչական տուգանքի գումարի չափը ՀՀ դրամով*	*Շրջակա միջավայրին պատճառված վնասի չափը ՀՀ դրամ*	*Տրված հանձնարարականների քանակը*	*Կատարված հանձնարարականների քանակը*
2021	232	42,890,000	887,184,537	120	88
2022	444	48,160,000	453,300,104	117	63
2023	426	57,900,000	1,864,802,177	128	64

Ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ 2023 թվականի 155 ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 155 ստուգումներ

Ստուգումների շրջանակը

2023 թվականին թիրախավորվել է տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները՝

- ✓ հանքարդյունաբերություն
- ✓ անտառային տնտեսություն և հատուկ պահպանվող տարածք
- ✓ շինարարություն
- ✓ էլեկտրաէներգիայի արտադրություն
- ✓ ձկնաբուծություն
- ✓ ջրամատակարարում
- ✓ թափոնների տեղադրում և ոչնչացում
- ✓ արտադրություն
- ✓ հասարակական սննդի կազմակերպում
- ✓ պետության կառավարում և հասարակության սոցիալ-տնտեսական քաղաքականություն
- ✓ անասնաբուծություն, բուսաբուծություն
- ✓ զվարճանքների և հանգստի կազմակերպում

Տարեկան ծրագրով նախատեսված 155 ստուգում իրականացնելու հանձնարարագրերը հրապարակվել են (կատարողականը՝ 100%):

Հրապարակված ստուգում իրականացնելու հանձնարարագրերից 146-ն ավարտվել է, 3-ը ուժը կորցրած է ճանաչվել (ավարտված ստուգումների կատարողականը՝ 96,1%), «Հայաստանի Հարնարպետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի համաձայն ստուգման ժամանակահատվածը կարող է տևել մոտ 49 աշխատանքային օր, որի հիմքով ստուգումներից 6-ը գտնվում են ընթացքի մեջ և տեղափոխվել է 2024 թվական:

Արդյունքում կայացվել է 281 վարչական տույժ նշանակելու մասին որոշում, կիրառվել է վարչական տույժ՝ 33,410,000 ՀՀ դրամի չափով, կազմվել է 136 ակտ և 10 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 91 պարտադիր կատարման հանձնարարական, որից 48-ը կատարվել է, իսկ մյուսները գտնվում են սահմանված ժամկետներում:

Հաշվարկվել է վնաս 3,665,720,493 ՀՀ դրամի չափով, որից՝

- շրջակա միջավայրին՝ 1,864,802,177 ՀՀ դրամ
- պետությանը պատճառված՝ 1,800,918,616 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվել էր իրականացնել 155 ստուգում (բարձր-109, միջին 39, ցածր 7): Ավարտված 146 տնտեսավարող սուբյեկտների ստուգման արդյունքներով ստորև ներկայացվում է իրակնացված ստուգումից առաջ և հետո առկա է ռիսկայնության գնահատման հետևյալ պատկերը համաձայն *Աղյուսակ 13-ի*

Աղյուսակ 13

Ռիսկայնության աստիճան	Ստուգումից առաջ	Ստուգումից հետո*
բարձր	101	31
միջին	38	110
ցածր	7	5

**Տարեկան ծրագրով իրականացված ստուգումների արդյունքում տրված պարտադիր կատարման թվով 91 հանձնարարականներից 44-ը հաշվետու ժամանակաշրջանում գտնվում են սահմանված ժամկետներում, որոնց կատարման արդյունքներից ելնելով՝ կփոփոխվեն վերը նշված աղյուսակի ռիսկայնության գնահատման աստիճանները:*

Աղյուսակ 14

Ստուգումների տարեկան ծրագրի կատարողականի համեմատականը՝ նախորդ երկու տարիների հետ			
	2021	*2022*	*2023*
Տարեկան ծրագրով ստուգումների քանակը	100	130	155
հրապարակված հանձնարարագրեր, որից	79	129	155
ավարտված	71	122	146
ուժը կորցրած	1	1	3
հաջորդ տարի տեղափոխված	7	6	6

2023 թվականի արտածրագրային 137 ստուգումից

128-ն ավարտվել է, 7-ը տեղափոխվել է 2024 թվական, 2-ը ուժը կորցրած է ճանաչվել: Արդյունքում կայացվել է 145 վարչական տույժի որոշում՝ 24,490,000 ՀՀ դրամի չափով, կազմվել է 107 ակտ և 21 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 37 պարտադիր կատարման հանձնարարական, որից 16-ը կատարվել է:

Հաշվարկվել է վնաս 674,167,843 ՀՀ դրամի չափով, որից՝

- շրջակա միջավայրին՝ 97,020,669 ՀՀ դրամ
- պետությանը պատճառված՝ 477,147,174 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Աղյուսակ 15

Արտածրագրային ստուգումների կատարողականի համեմատականը՝ նախորդ երկու տարիների հետ			
	2021	*2022*	*2023*
Արտածրագրային ստուգումների քանակը	178	138	137
ավարտված	142	119	128
հաջորդ տարի տեղափոխված	9	14	7
ուժը կորցրած	27	5	2

137 հանձնարարագրերի հրապարակման հիմքերը

- 2022 թվականից տեղափոխված տարեկան ծրագրով – 6 ստուգում, որից 5-ը ավարտվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- ՀՀ վարչապետի հանձնարարականով - 24 ստուգում, որից 23-ը ավարտվել է, 1-ը տեղափոխվել է 2024թ,
- Իրավապահ մարմիններից ստացված գրություններով - 30 ստուգում, որից 27-ը ավարտվել է, 3-ը տեղափոխվել է 2024թ,
- ՀՀ նախարարարությունների գրություններով - 36 ստուգում, որից 33-ը ավարտվել է, 3-ը տեղափոխվել է 2024թ,
- Պետական եկամուտների կոմիտեից ստացված գրություններով - 10 ստուգում, որից ավարտվել է 10-ը,
- քաղաքացիներից ստացված բողոք-դիմումներով - 9 ստուգում, որից ավարտվել է 9-ը,
- Տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրություններով - 4 ստուգում, որից ավարտվել է 4-ը,
- ԲԸՏՄ-ի կողմից իրականացված ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրված խախտումները վերացնելու մասին

հանձնարարականների կատարման հիմքով - 15 ստուգում, որից 14-ը ավարտվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,

- Պետական վերահսկողական ծառայությունից ստացված գրությունով - 3, որից ավարտվել է 3-ը:

2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմում է 12 օր, ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների (ինչպես նաև գործուղման) միջին տևողությունը՝ 5 օր, իսկ մեկ ստուգմանը (ինչպես նաև գործուղման) մասնակցած աշխատողների քանակը՝ միջինում 3 աշխատող:

2021 թվականի հոկտեմբերի 17-ից ԲԸՏՄ «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 29.1 հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակում իրավունք է ձեռք բերել իրականացվող ստուգումների կամ դիտարկումների շրջանակներում անհապաղ կասեցնել բնապահպանական օրենսդրության խախտումներով իրականացվող տնտեսավարող սուբյեկտների գործողությունները կամ գործունեությունը: Իրականացված ստուգումների կամ դիտարկումների շրջանակներում կիրառված կասեցումների քանակը նախորդ տարիների համեմատականով ներկայացված է *Աղյուսակ 16-ում*:

Աղյուսակ 16

Ստուգումների արդյունքներով կասեցված գործունեության/գործողության վերաբերյալ 2021-2023 թվականների համեմատականը						
Ուղղություններ	*Գործունեության/գործողության կասեցում*			*Կասեցման վերացում*		
	2021	*2022*	*2023*	*2021*	*2022*	*2023*
Մթնոլորտային օդի պահպանություն		13	10		9	6
Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն		12	33		2	4
Ընդերքօգտագործում և պահպանություն	1	1	2			
Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ			1			
Ընդամենը	**1**	**26**	**46**	**0**	**11**	**10**

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում վերհանվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները, մասնավորապես՝

- ՀՀ «Ջրային օրենսգրքի» 21-րդ, 27-րդ հոդվածներ,
- ՀՀ «Հողային օրենսգրքի» 8-րդ և 110-րդ հոդվածներ,
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 15-րդ հոդվածներ,
- ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքի 46-րդ, 59-րդ և 65-րդ հոդվածներ,
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք 12-րդ, 13-րդ հոդվածներ,
- ՀՀ Հարկային օրենսգրքի 166-րդ, 167-րդ, 168-րդ, 169-րդ, 170-րդ, 203-րդ, 204-րդ, 205-րդ, 212-րդ հոդվածներ:

Աղյուսակ 17

Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումներ	2021	2022	2023
ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք	101	142	237
ՀՀ Ջրային օրենսգիրք	71	58	96
ՀՀ Հողային օրենսգիրք	64	69	86
ՀՀ Հարկային օրենսգիրք	140	167	310
ՀՀ Անտառային օրենսգիրք	24	15	19
Թափոնների մասին ՀՀ օրենք	91	128	197
Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք	93	97	152
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք	24	36	27
Պաշտոնական վիճակագրության մասին ՀՀ օրենք	39	53	122
Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենք	7	6	5
Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք	0	0	13
Լիցենզավորման մասին ՀՀ օրենք	11	32	62
Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք	14	20	11
Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք	0	22	17
Ընդամենը	**679**	**845**	**1354**

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԸՏՄ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականին ԲԸՏՄ ղեկավարի կողմից արձակվել է դիտարկում իրականացնելու մասին թվով 16 հրաման, որից

- 8-ը՝ ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն (ավազի լվացման կայան, ապօրինի ջրառ)
- 8-ը՝ ընդերքօգտագործում (ավազի և խճի արդյունահանում՝ ընդերքօգտագործում և ընդերքի պահպանության ու ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանության ուղղություններ)

Դիտարկումների ընթացքում հայտնաբերվել է թվով 12 խախտում, որի հիման վրա կայացվել է տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կասեցնելու մասին որոշումներ *(կասեցումների մասին տեղեկատվությունը ընդգրկված է Աղյուսակ 16-ում)*, 3 տնտեսավարող սուբյեկտների մոտ խախտումներ չեն արձանագրվել, իսկ 1 տնտեսավարողի մոտ արձանագրվել է խախտում, սակայն դիտարկման ընթացքում այն վերացվել է:

Աղյուսակ 18

Իրականացված դիտարկումների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ			
Ժամանակահատված	*Քանակ*	*Չեն հայտնաբերվել խախտումներ*	*Հայտնաբերված խախտումներ*
2021	30	8	22
2022	-	-	-
2023	16	4	12

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում ընդհանուր առմամբ

- արձանագրվել է 1024 իրավախախտում
- կիրառվել է 250 վարչական տույժ

- նշանակվել է 24,120,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք
- կատարվել է 1,249 վնասի հաշվարկ
- հաշվարկվել է բուսական և կենդանական աշխարհին պատճառված վնաս 1,273,384,433 ՀՀ դրամի չափով

Բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ուղղություն

Հայաստանի Հանրապետությունում անտառների կայուն կառավարումն իրականացվում է Շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 17 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի և ԲՀՊՏ-ների 6 ՊՈԱԿ-ների միջոցով:

Ներկայումս պետական անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունն իրականացվում է պահպանություն իրականացնող աշխատակիցների միջոցով, ովքեր աշխատում են աշխատանքային օրենսգրքով սահմանված հնգօրյա և 8-ժամյա աշխատանքային գրաֆիկով, ինչի արդյունքում հնարավոր չի լինում լիարժեք ապահովել տարածքների պատշաճ պահպանությունը:

2023 թվականի նոյեմբերի 22-ին ընդունվել է (ուժի մեջ է մտել 2024 թվականի հունվարի 1-ից) «Էկոպարեկային ծառայության» մասին ՀՀ օրենքը, որպես պետական ծառայության առանձին տեսակ: Այսուհետ պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների հայտնաբերման, կանխման, կանխարգելման և պահպանության ապահովումը իրականացվելու է Էկոպարեկային ծառայության կողմից:

Իրականացվել են սպուգումներ

Ծրագրային ստուգում՝ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ճամբարակի և Վայոց ձորի անտառտնտեսություն մասնաճյուղերում:

Արտածրագրային ստուգում՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդանի, Կապանի և Ջիլիզայի անտառտնտեսություն մասնաճյուղերում:

Կազմվել է 6 ստուգման ակտ, արդյունքում 2 ստուգմամբ կայացվել է վարչական տույժի 4 որոշում, կիրառվել է 600,000 ՀՀ դրամի չափով տուգանք, իսկ 6 ստուգման նյութերն

ուղարկվել են ՀՀ իրավապահ մարմիններին, որոնցով հաշվարկված բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը 182 ապօրինի հատված ծառի համար կազմել է 12,085,250 ՀՀ դրամ:

Սպուգումներով հայտնաբերված խախտումներ

Հայտնաբերվել են ՀՀ Անտառային և Հողային օրենսգրքերի, Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության, Բնության հատուկ պահպանվող տարածքների, Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքների պահանջների խախտումներ:

Մասնավորապես՝

- անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում ապօրինի հատվել են ծառեր, ինչի արդյունքում անտառի սեփականատիրոջ պարտականություններն իրականացվել են ոչ պատշաճ
- չեն իրականացվել անտառների պետական հաշվառում
- հիմնականում հաստատված չեն անտառաշինության արդյունքում մշակված և անտառային տնտեսության վարման նպատակով անտառաշինական նախագծերը (անտառակառավարման պլան)
- խախտվել է բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմը
- չեն ապահովել անտառօգտագործման, անտառավերականգնման և անտառապատման կարգը
- խախտվել է արգելքը բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտում տնտեսական գործունեության առնչությամբ
- իրականացվել է կառուցապատում առանց սահմանված նախագծերի համաձայնեցման և շրջակա միջավայրի ազդեցության դրական փորձաքննության և շինարարության թույլտվության:

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն

ԲԸՏՄ վերահսկողական և կանխարգելիչ միջոցառումների արդյունքների, ինչպես նաև Պարեկային ծառայության կողմից տարվող հետևողական աշխատանքների, երկու

տարիների իրավիճակն արտացոլող աղյուսակի տվյալների վերլուծությունից նկատվում է ապօրինի ծառահատումների թվի նվազում, սակայն կարծում ենք, որ ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման վերաբերյալ խնդիրները կլուծվեն նաև Էկոպարեկային ծառայության միջոցով:

2023 թվականին հաշվարկված բնությանը պատճառված վնասի հատուցման չափի մեծությունը նախորդ տարիների համեմատ պայմանավորված է բնության հատուկ պահպանվող տարածքներում ապօրինի ծառահատման դեպքերով, քանի որ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների հաշվարկման կարգի համաձայն՝ հատուկ պահպանվող տարածքներում գործակիցը ավելի բարձր է:

Հարկ է նշել, որ 2023 թվականի ընթացքում ՀՀ իրավապահ մարմիններին ուղարկված նյութերից թվով 823-ը (նախորդ տարվա 514-ի համեմատ) միայն ապօրինի ծառահատման և փայտանյութի ձեռքբերման վերաբերյալ գործերն են՝ շրջակա միջավայրին պատճառված 1,181,527,517 ՀՀ դրամ վնասի չափով (նախորդ տարվա 884,504,764 ՀՀ դրամի համեմատ):

Նախորդ երկու տարիների իրավիճակն արտացոլող տվյալները ներկայացված են *Աղյուսակ 19-ում*:

Աղյուսակ 19

Ապօրինի ծառահատումներ և ձեռքբերված փայտանյութի տեղափոխում					
Ժամանակահատված	*Հատված ծառերի քանակը /հատ/*	*Ձեռքբերված փայտանյութի ծավալը /խմ/*	*Տուգանված անձանց թիվը*	*Վարչական տուգանքի չափը*	*Բնությանը պատճառված վնասի գումարի չափը*
2021	19,475	2,567	272	28,780,000	1,004,640,274
2022	18,405	1,232	218	22,340,000	893,690,284
2023	14,374	2,248	189	19,210,000	1,249,854,084

Ապօրինի ծառահատումների քանակային վերլուծությունը ցույց է տալիս, որ հատվող ծառերի քանակի տեսանկյունից առավել խնդրահարույց են ՀՀ Տավուշի և Լոռու, մարզերը *Աղյուսակ 20-ում*:

Աղյուսակ 20

Ապօրինի ծառահատումների քանակը/հատ՝ ըստ խնդրահարույց մարզերի		
Ժամանակահատված	*Տավուշի մարզ*	*Լոռու մարզ*
2021	7435	2976
2022	4217	5620
2023	6076	6555

Կանխարգելիչ գործողություններ

Համաձայն ԲԸՏՄ 2023 թվականի տարեկան գործունեության ծրագրի՝ 2023 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակներում իրականացվել են ապօրինի ծառահատման, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված փայտանյութի դուրս բերումն ու տեղափոխումը բացառող ուժեղացված միջոցառումներ:

Միջոցառման ընթացքում կիրառվել են նաև անօդաչու թռչող սարքեր՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և Բնության հատուկ պահպանվող տարածքների անտառածածկ տարածքները դիտարկելու նպատակով:

Կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության ուղղություն

Իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում ընդհանուր առմամբ՝

- արձանագրվել է 155 իրավախախտում,
- կիրառվել է 42 վարչական տույժ,
- նշանակվել է 3,570,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք,
- կատարվել է 106 վնասի հաշվարկ, որոնցով կենդանական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 23,530,349 ՀՀ դրամ:

- արձանագրվել է շուրջ 119 վայրի կենդանու ապօրինի որսի դեպք, որից՝ 1 բեզոարյան այծ, 2 գայլ, 1 քարակաքավ, 39 տափաստանային արտույտ, 71 թխակապույտ աղավնի, 1 վայրի խոզ, 4 նապաստակ և 3,128.433 կգ ձկնատեսակ:
- առգրավվել է 11 հատ լողամիջոց, 254 հատ ձկնորսական ցանց, 1 հատ ձկնորսական էկրան, 1192 հատ խեցգետնաորսիչ, 1 հատ ձկնորսական համզգեստ *(կոմբինիզոն)*, 8 միավոր որսորդական զենք, որոնց բռնագրավելու պահանջով 8 հայցադիմում է ներկայացվել դատարան, որից՝ 3-ը բավարարվել է, 5-ը ընթացքի մեջ է:
- արձանագրվել է 21 վայրի կենդանիների պահման կանոնների խախտման դեպք, որից՝ 1 վագր, 9 արջ, 5 կապիկ, և 6 միջերկրածովյան կրիա:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների և նրանց արգասիքների ձեռքբերման օրինականությունը պարզելու նպատակով նյութերն ուղարկվել են իրավապահ մարմիններին:

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն

Վերահսկողության արդյունքներով բարձր ռիսկային են ապօրինի որսի և սիգի ձվադրման ժամանակահատվածի հետ կապված ձկնորսության խնդիրները: Նախորդ տարիների իրավիճակը արտացոլող տվյալները ներկայացված են *Աղյուսակ 21-ում*:

Աղյուսակ 21

Հայտնաբերված և առգրավված վայրի կենդանիների և ձկան քանակը					
Ժամանակահատված	*Հայտնաբերված և առգրավված վայրի կենդանիների քանակը /հատ/*	*Հայտնաբերված և առգրավված ձկան քանակը /կգ/*	*Վարչական տույժերի քանակը*	*Վարչական տուգանքի չափը*	*Բնությանը պատճառված վնասի գումարի չափը*
2021	115	689	45	4,100,000	11,705,590
2022	194	2,997	27	2,920,000	19,823,560
2023	140	3,128	42	3,570,000	23,530,349

Կանխարգելիչ գործողություններ

«Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումներ» ծրագրի շրջանակում ԲԸՏՄ, Ներքին գործերի նախարարության, Շրջակա միջավայրի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, Գեղարքունիքի մարզպետարանի, Սննդամթերքի անվտանգության ԲԸՏՄ-ի և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ, սիգի ձվադրման ժամանակահատվածով պայմանավորված, 2023թ. նոյեմբերի 25-ից մինչև 2024թ. հունվարի 20-ը վերահսկողական ուժեղացված միջոցառումներ է իրականացրել Սևանա լճում (հարակից տարածքներում) և Հայաստանի ողջ տարածքում: Վերահսկողական միջոցառումների շրջանակներում պատասխանատու գերատեսչությունների ներկայացուցիչները համատեղ իրականացրել են հանդիպումներ Սևանա լճի հարակից բնակավայրերի ղեկավարների, ձկնորսների և քաղաքացիների հետ: Բացատրական աշխատանքներ են տարվել միջոցառման նպատակի վերաբերյալ, որն է՝ արգելել Սևանա լճում սիգի որսը՝ ձկնատեսակի ձվադրման ժամանակահատվածով պայմանավորված: Այս համատեքստում՝

- Խստացված վերահսկողություն է իրականացվել Սևանա լճում և լիճը գոտևորող մայրուղիներում:

- Տեղադրվել են հսկիչ կետեր Սևանի ճանապարհային ոստիկանության, Սևան – Ճամբարակ – Վարդենիս, Մարտունի – Սելիմ լեռնանցք – Աղնջաձոր և Դիլիջանի ոլորանների հենակետերում:
- Երևան քաղաքի ձկան վաճառակետերում և մարզերի շուկաներում իրականացվել է խիստ վերահսկողություն:
- Հենակետերում և շուկաներում առգրավվել է ընդհանուր առմամբ 2,433.064 կգ սիգ տեսակի թարմ ձուկ, 3 հատ լողամիջոց, 227 հատ ձկնորսական ցանց, 23 հատ խեցգետնորսիչ:
- Առգրավված 1,146.90 կգ սիգ տեսակի ձկան մասով հարուցվել է 5 քրեական գործ՝ 5,734,500 ՀՀ դրամ վնասի չափով:

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի մարտի 27-ի N 111-Ն հրամանով հաստատվել է անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության տրամադրման կարգը:
- Բնության հատուկ պահպանվող տարածքներում առկա ապօրինի շինությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է Տեղական ինքնակառավարման մարմիններին հետագա ընթացքն իրականացնելու համար:
- Բնության հատուկ պահպանվող տարածքներում և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսություն մասնաճյուղերում իրականացված ստուգման շրջանակներում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է Լիազոր մարմնին:
- Լիազոր մարմնին առաջարկվել է «Անտառահատման տոմսի և անտառային տոմսի օրինակելի ձևերը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին» հրամանում «Հատատեղի քառակուսին» բառակապակցությունից հետո ավելացնել «Աշխարհագրական կոորդինատներ» բառակապակցությունը, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ և

(Հատատեղի Հաշվեգնահատման Ցուցակ) «Յուղաներկի» բառը փոխարինել «Պիտակների» բառով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը վերահսկողության ընթացքում

2023 թվականին Կենսաբազմազանության վերահսկողության վարչության աշխատակիցները «Երևանի ավիամոդելավորման» դպրոցում և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում մասնակցել են անօդաչու թռչող սարքերի (դրոնների) կիրառման և ծրագրային ապահովման դասընթացներին:

Նոր տեխնոլոգիաների կիրառումը էականորեն կբարձրացնի Կենսաբազմազանության ոլորտում վերահսկողության արդյունավետությունը, մասնավորապես անտառածածկ տարածքների դիտարկումը անօդաչու թռչող սարքերով կնվազեցնի մարդկային գործոնի ներգրավվածությունը և նյութատեխնիկական միջոցների օգտագործումը:

Վերապատրաստման դասընթացներ

2023 թվականին Ներքին գործերի նախարարության ոստիկանության կրթահամալիրում կենսաբազմազանության վերահսկողության վարչության աշխատակիցները մասնակցել են մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ, ՋՐԵՐԻ, ՀՈՂԵՐԻ, ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրվել է 1334 իրավախախտման դեպք (2022 թվականին՝ 992), կիրառվել է 805 վարչական տույժ (2022 թվականին՝ 677), նշանակվել է 105,130,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք (2022 թվականին՝ 65,320,000 ՀՀ դրամի չափով) և հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 2,101,879,482 ՀՀ դրամի չափով (2022 թվականին՝ 354,506,734 ՀՀ դրամի չափով):

2021 և 2022 թվականների հետ համեմատական տվյալները ներկայացված են *Աղյուսակ 22-ում և Աղյուսակ 23-ում*:

Աղյուսակ 22

Կիրառված վարչական տույժերի քանակն ու տուգանքի գումարի չափն՝ ըստ վերահսկողության ուղղությունների							
Հ/Հ	Ուղղությունները	2021		2022		2023	
		քանակը	տուգանքի չափը	քանակը	տուգանքի չափը	քանակը	տուգանքի չափը
1	Մթնոլորտային օդի պահպանություն	135	11,430,000	154	13,000,000	216	26,000,000
2	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	107	19,820,000	80	22,230,000	112	45,850,000
3	Վտանգավոր նյութեր, արտադրության և սպառման թափոններ	67	3,220,000	87	4,700,000	99	4,840,000
4	Հողերի օգտագործում և պահպանություն	66	4,860,000	63	5,360,000	73	5,910,000
5	Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում	324	15,690,000	253	19,810,000	258	17,550,000
6	Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)	46	3,750,000	40	3,520,000	47	4,980,000
Ընդամենը		**745**	**58,770,000**	**677**	**68,620,000**	**805**	**105,130,000**

Աղյուսակ 23

Հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի քանակն ու չափն՝ ըստ վերահսկողության ուղղությունների							
Հ/Հ	Ուղղությունները	2021		2022		2023	
		քանակը	տուգանքի չափը	քանակը	տուգանքի չափը	քանակը	տուգանքի չափը
1	Մթնոլորտային օդի պահպանություն	37	48,678,079	45	198,171,172	51	180,863,753
2	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	18	632,870,525	26	94,974,272	33	1,638,276,029
3	Հողերի օգտագործում և պահպանություն	98	213,172,424	82	61,361,290	144	282,739,700
Ընդամենը		**153**	**894,721,028**	**153**	**354,506,734**	**228**	**2,101,879,482**

Մթնոլորտային օդի պահպանության ուղղությունով

Արձանագրվել է թվով 329 իրավախախտման դեպք (2022 թվականին՝ 179), որոնցից թվով 216-ով կիրառվել է վարչական տույժ (2022 թվականին՝ 154), որի համար նշանակվել է 26,000,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք (2022 թվականին՝ 13,000,000 ՀՀ դրամի չափով), և 51 դեպքով հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ 180,863,753 ՀՀ դրամի չափով (2022 թվականին՝ 198,171,172 ՀՀ դրամի չափով), որից 121,359,359 ՀՀ դրամի չափով՝ ընդերքօգտագործման ստուգումների արդյունքում:

Իրավախախտման դեպքերն ըստ ոլորտների ներկայացված է ստորև.

- Շինարարություն՝ 132 դեպք
- Առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի տեղափոխում՝ 64 դեպք
- Խոզանների այրում՝ 24 դեպք
- Հանքարդյունաբերություն՝ 39 դեպք
- Արտադրություն՝ 43 դեպք
- Այլ՝ 27 դեպք

Անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների թույլտվության բացակայության հիմքով թվով 10 տնտեսավարող սուբյեկտների մոտ կասեցվել են գործունեությունը/գործողությունը, որոնցից 6 տնտեսվարող, լիազոր մարմնից, ստացել է համապատասխան թույլտվություն, ինչի հետևանքով կասեցումները հանվել են, (2022թ. անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների թույլտվության բացակայության հիմքով գործունեությունը/գործողությունը կասեցվել են 13 տնտեսավարող սուբյեկտների մոտ, որոնցից 9 տնտեսավարող լիազոր մարմնից ստացել է համապատասխան թույլտվություն, ինչի հետևանքով կասեցումները հանվել են):

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները

- առանց սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվության գործունեություն,

- թույլտվության չափաքանակների գերազանցմամբ գործունեություն,

Մասնավորապես՝

- Շինարարական հրապարակներում արձանագրվել են շինարարական հրապարակները չցանկապատելը, շենքերը և շինությունները շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով չծածկելը, շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը չլվանալը, սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը չպահեստավորելը փակ տարածքներում կամ անթափանց թաղանթներով չծածկելը, օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար չջրելը: Իսկ տեղափոխող բեռնատարների դեպքում՝ սորուն նյութերը անթափանց ծածկոցով ծածկված չլինելը, որը հանգեցնում է փոշու արտանետումները շինարարական հրապարակից դուրս տարածվելուն:
- Հանքարդյունաբերության ոլորտում խախտումները պայմանավորված են անօրգանական փոշու և այլ նյութերի չափաքանակներից ավել արտանետումներով, կամ չեն ապահովվում փոշու նվազեցմանն ուղղված միջոցառումները:
- Մետաղական խտանյութի մշակմամբ զբաղվող կազմակերպությունները, հատկապես ֆերոձուլվածքների արտադրությամբ զբաղվողները, հեռացող գազերի մաքրման համակարգի անարդյունավետ աշխատանքի արդյունքում՝ բավարար քանակությամբ չեզոքացուցիչ չօգտագործելու հետևանքով մթնոլորտ են արտանետում մեծ քանակությամբ վտանգավոր նյութեր (ծծմբի երկօքսիդ և անօրգանական փոշի):

Կանխարգելիչ միջոցառումներ

- 2023 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված պարբերականությամբ իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերահսկողական միջոցառումներ, տարեկան պլանավորված ստուգումներ և

վարչական վարույթներ, ինչպես նաև շարունակական կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում փոշու արտանետումները նվազեցնելուն ուղղված գործողություններ, *տե՛ս Աղյուսակ 3-ում*:

- Փոշու արտանետումները շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով ԲԸՏՄ-ում կազմակերպվել են 2 հանդիպում և իրազեկման աշխատանք՝ 13 շինարարական և ընդերքօգտագործող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի ժամանակ, ուսումնասիրելով միջազգային փորձը, ներկայացվել է առաջարկություն շինարարական հրապարակներից դուրս փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրառել նոր տեխնոլոգիաներ, օրինակ՝ փոշու նստեցման ջրի թնդանոթներ, ինչը արդեն իսկ կիրառվում է մեկ կազմակերպության կողմից:
- 2023 թվականի տարեկան գործունեության ծրագրով ՀՀ մարզերում և Երևան քաղաքում փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով իրականացված բնապահպանական վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրել է 64 բեռնատար ավտոմեքենայով առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի տեղափոխման դեպք, *տե՛ս Աղյուսակ 3-ում*:
- Խոզանների, բուսական մնացորդներով և չորացած բուսականությամբ տարածքների, արոտավայրերի և խոտհարքների բուսականության այրման դեպքերի հայտնաբերման և կանխարգելման նպատակով ԲԸՏՄ-ի կողմից արձանագրվել է 89 դեպք: Հայտնաբերված դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվել է համապատասխան գերատեսչություններին՝ իրավախախտների հետ բացատրական աշխատանքներ իրականացնելու համար:

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

- Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի՝ պետական հաշվառման ենթակա են այն իրավաբանական անձինք և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձինք, որոնց գործունեության հետևանքով առաջացող աղտոտող

(վնասակար) նյութերի արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված ՕՊՕ-ն տարեկան կտրվածքով գերազանցում է երկու հարյուր միլիոն խորանարդ մետր չափանիշը, այսինքն տնտեսավարող սուբյեկտը մինչև գործունեություն ծավալելը պետք է կատարի ՕՊՕ-ի հաշվարկ՝ պարզելու համար պետական հաշվառման ենթակա է, թէ ոչ: Հաճախ ստուգումների ժամանակ պարզվում է, որ տնտեսավարող սուբյեկտները գործունեություն են իրականացնում առանց ՕՊՕ-ի հաշվարկի, որը խոչընդոտներ է առաջացնում լիարժեք ստուգում իրականացնելու համար: Վերը նշվածի վերաբերյալ ներկայացվել է առաջարկություն լիազոր մարմնին:

- Երևան քաղաքում վերահսկողական աշխատանքների ընթացքում մթնոլորտ փոշու արտանետումները կանխարգելելու նպատակով թվով 26 շինարարական նյութերի (ավազ, խիճ) վաճառքի կետերում ավազը և խիճը անթափանց ծածկոցով ծածկված կամ պահեստավորված չլինելու վերաբերյալ համապատասխան հասցեներով տեղեկատվությունը փոխանցվել է Երևանի քաղաքապետարանին՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:
- Երևան քաղաքում վերահսկողություն իրականացնելիս պարզվել է, որ ճանապարհներին իրականացվում են խրամուղիների փորման՝ գազատարների, էլեկտրահաղորդալարերի, կոյուղատարների, ջրագծերի և այլ կոմունիկացիաների անցկացման աշխատանքներ, որոնք ճիշտ չկազմակերպելու (շինարարական հրապարակները սահմանված ձևով չկահավորելու) և ժամանակին չասֆալտապատելու հետևանքով հանգեցնում են փոշու արտանետումներով օդի աղտոտվածության բարձրացմանը: Վերոգրյալը նկատի ունենալով՝ գրություն է ուղարկվել Երևանի քաղաքապետարան՝ նշված աշխատանքների ժամանակ քաղաքաշինական նորմերի պահպանման նկատմամբ հսկողությունը խստացնելու համար, որի արդյունքում փոշու արտանետումները կնվազեն:

Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ուղղությունով

Արձանագրվել է թվով 161 իրավախախտման դեպք (2022 թվականին՝ 99), որոնցից թվով 112-ով կիրառվել է վարչական տույժ (2022 թվականին՝ 80) և նշանակվել է 45,850,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք (2022 թվականին՝ 22,230,000 ՀՀ դրամ) և 33 դեպքով հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ 1,638,276,029 ՀՀ դրամի չափով (2022 թվականին՝ 94,974,272 ՀՀ դրամ), որից 378,631 ՀՀ դրամը ընդերքօգտագործման ստուգումների արդյունքում:

Իրավախախտման դեպքերն ըստ ոլորտների ներկայացված է ստորև.

- Ձկնաբուծություն՝ 39 դեպք,
- Էլեկտրաէներգիայի արտադրություն՝ 6 դեպք,
- Ջրօգտագործողների ընկերություն՝ 16 դեպք,
- ՏԻՄ գործունեություն՝ 14 դեպք,
- Արտադրություն՝ 10 դեպք,
- Այլ՝ 76 դեպք:

Ստուգումների արդյունքում ապօրինի ջրառ իրականացնելու հետևանքով կայացվել են 33 գործունեությունը/գործողությունը կասեցնելու վերաբերյալ որոշում, որից 4-ի կասեցումները, սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո հանվել են:

Ջրօգտագործում իրականացնող ընկերությունների մոտ առավել հաճախ արձանագրված խախտումներն են

- առանց ջրօգտագործման թույլտվության ջրառ
- ջրօգտագործման թույլտվությունների պայմանների խախտումներ,
- հեռացվող կեղտաջրերի մաքրման բացակայություն,
- ոչ սահմանված վայրերում կեղտաջրերի հեռացում,
- միջոցներ չեն ձեռնարկվել ջրօգտագործման թույլտվություններ ստանալու, ժամկետները լրացած ջրօգտագործման թույլտվությունները սահմանված կարգով երկարաձգելու և անվանափոխվելուց հետո ձևակերպելու,

ջրաչափերի տեղադրման, կապարակնքման և գործունեությունը ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

Թվով 7 Ջրօգտագործող ընկերությունում (ՋՕԸ) իրականացված ստուգման արդյունքում թվով 5 տնտեսավարող սուբյեկտներ ենթարկվել են վարչական տույժի (2-ի նկատմամբ վարույթն ընթացքի մեջ է)՝ ընդհանուր 3,700,000 ՀՀ դրամի չափով, 4 տնտեսավարողի նկատմամբ հաշվարկվել է 1,597,854,413 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնաս մասնավորապես՝

1. «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում առանց ջրօգտագործման թույլտվության ստորգետնյա և մակերևույթային ջրային ռեսուրսներից իրականացված ջրառի և տրված ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտման համար նշանակվել է 1,300,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք և հաշվարկվել է 103,148,042 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնաս.
2. «ԱՐՄԱՎԻՐ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում առանց ջրօգտագործման թույլտվության ջրային ռեսուրսներից իրականացված ջրառի և ջրօգտագործման թույլտվությամբ տրամադրված չափաքանակները գերազանցելու հետևանքով հաշվարկվել է 619,824,733 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնաս.
3. «ԷՋՄԻԱԾԻՆ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում առանց ջրօգտագործման թույլտվության ջրային ռեսուրսներից իրականացված ջրառի իրականացնելու հետևանքով հաշվարկվել է 869,844,238 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնաս.
4. «ԵՂԵԳՆԱՁՈՐ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում առանց ջրօգտագործման թույլտվության ջրային ռեսուրսներից իրականացված ջրառի և

տրված ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտման համար նշանակվել է 1,000,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք և հաշվարկվել է 5,037,400 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնաս.

5. «ՏԱՎՈՒՇ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում առանց ջրօգտագործման թույլտվության ջրային ռեսուրսներից իրականացված ջրառի և ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտման համար նշանակվել է 800,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:
6. «ՇԻՐԱԿ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում տրված ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտման համար նշանակվել է 500,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:
7. «ԱՐՏԱՇԱՏ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում նախկինում տրված հանձնարարականի պահանջները չկատարելու համար նշանակվել է 100,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Կանխարգելիչ միջոցառումներ

- Իրականացվել են օրենսդրական դաշտին առնչվող բացատրական աշխատանքներ, պարզաբանումներ, մասնավորապես մակերևույթային և ստորգետնյա ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման բնագավառում:
- Ջրօգտագործող ընկերություններում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոնների ուղղությունում

Արձանագրվել է թվով 199 իրավախախտման դեպք, որոնցից թվով 99-ում կիրառվել է վարչական տույժ, որի համար նշանակվել է 4,840,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

- Կոմունալ սպասարկման ծառայություն՝ 32 դեպք
- Հանքարդյունաբերություն՝ 29 դեպք

- Շինարարություն, արտադրություն՝ 56 դեպք
- Սպասարկում՝ 10 դեպք
- Ձկնաբուծություն՝ 5 դեպք
- Այլ՝ 67 դեպք:

Ստուգումների արդյունքում 1 տնտեսավարող սուբյեկտի մոտ առանց լիցենզիայի երրորդ դասի վտանգավորության աստիճան ունեցող վտանգավոր թափոնների գործածության համար կայացվել է գործունեության/գործողության կասեցման որոշում:

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները

- թափոնների անձնագրավորման բացակայություն, ինչը թափոնների կառավարման ոլորտի հիմնադրույթներից է, քանի որ թափոնների անձագրավորմամբ է սահմանվում թափոնների առաջացման աղբյուրները, վտանգավորության աստիճանը, ոչնչացման եղանակը:
- թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման բացակայությունը, որը իրականացվում է պետության կողմից տեղեկատվության հավաքման, մշակման, պահպանման և վերլուծության ապահովման նպատակով:
- գոյացող, օգտագործվող, վնասազերծվող, այլ անձանց փոխանցվող կամ այլ անձանցից ստացվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառման բացակայություն,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների աղավաղումներով ներկայացում,
- վտանգավոր թափոնների գործածության լիցենզիայի բացակայության 9 դեպք՝ կապված աղբավայրերի և աղբահանություն իրականացնող կազմակերպությունների գործունեության հետ, ինչը թափոնների գործածության ոլորտի հիմնադրույթներից է, քանի որ նպատակ է հետապնդում նվազեցնել մարդու առողջությանը և շրջակա միջավայրին հասցվող վնասը,

- թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի բացակայություն, ինչի առկայությունը նպատակ է հետապնդում կառավարելու թափոնների առաջացումը և շարժը, պահպանելու մարդու առողջությունը և շրջակա միջավայրը:

Թափոնների և վտանգավոր նյութերի գործածության ոլորտի վերահսկողության արդյունքներով հիմնական խնդիրներն են

- ՀՀ-ում գործող թափոնակուտակիչները և աղբավայրերը հիմնականում գրանցված են Շրջակա միջավայրի նախարարությունում վարվող թափոնների հեռացման վայրերի ռեեստրում, բայց չեն անցել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և չունեն վտանգավոր թափոնների գործածության լիցենզիա, ինչի հետևանքով բնապահպանական տեսանկյունից նրանց աշխատանքը կարգավորված չէ, բացակայում է նրանց բնապահպանական կառավարման պլանները:
- Հիմնական խնդիրներից է նաև արտադրական ձեռնարկություններում թափոնների գոյացման նորմատիվների և տեղադրման սահմանաքանակների նախագծերի, թափոնների անձնագրերի բացակայությունը: Նույն խնդիրները արձանագրվել են նաև շինարարության, ընդերքօգտագործման, բժշկական և սպասարկման ոլորտների կազմակերպություններում:

Հողերի օգտագործում և պահպանություն ուղղությունով արձանագրվել է

Արձանագրվել է թվով 130 իրավախախտման դեպք, որոնցից թվով 73-ով կիրառվել է վարչական տույժ, որի համար նշանակվել է 5,910,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: 144 դեպքով (14 դեպք արձանագրվել է 2022 թվականին) հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ 282,739,700 ՀՀ դրամի չափով, որից 218,174,673 ՀՀ դրամի չափով վնասը հաշվարկվել է ընդերքօգտագործման ստուգումների արդյունքում:

- Ձկնաբուծություն՝ 3 դեպք,
- Արտադրություն և շինարարություն՝ 15 դեպք,

- ՏԻՄ գործունեություն, կոմունալ սպասարկում՝ 4 դեպք,
- Հանքարդյունաբերություն՝ 48 դեպք
- Հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխում՝ 17 դեպք,
- Այլ՝ 43 դեպք:

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները

- Հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխում, որը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված հողի բերրի շերտի օգտագործման կարգի պահանջների չկատարման, տնտեսավարող սուբյեկտների կողմից հատկացված հողամասերում հողի բերրի շերտի պահպանման կանոնների խախտման հետ:
- Հողի բերրի շերտի դեգրադացիա, աղբոտում, աղտոտում, որոնք հայտնաբերվել են ընդերքօգտագործման ոլորտի տնտեսավարող սուբյեկտների մոտ և չեն իրականացվել հողի բերրի շերտի հանման և պահպանման պարտավորությունները:
- Արմավիրի մարզի Արաքս խոշորացված համայնքում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ձկնաբուծական տնտեսություններ կառուցելու արդյունքում կատարվել է հողի բերրի շերտի վնասում (դեգրադացիա): Վերոնշվածի հիմքով իրականացվել է 46 չափագրում: Չափագրմամբ ստացված ամբողջական նյութերը ուղարկվել են ՀՀ դատախազության Արմավիրի մարզի դատախազություն:

Կանխարգելիչ գործողություններ

Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզերի ճանապարհներին իրականացված միջոցառումների արդյունքում արձանագրվել են հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման 17 դեպք, *տե՛ս Աղյուսակ 3-ում*: Իրավախախտումների կանխարգելման նպատակով նախատեսվում է 2024 թվականին ևս իրականացնել շարունակական վերահսկողական միջոցառումներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ուղղությունով

Արձանագրվել է թվով 42 իրավախախտման դեպք, որից 8-ը ընդերքօգտագործման ուղղությամբ: Նշված թվով 47-ում (5 դեպք արձանագրվել է 2022 թվականին) իրավախախտների նկատմամբ կիրառվել է վարչական տույժ, որի համար նշանակվել է 4,980,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների և վիճակագրական հաշվետվությունների ուղղություններով

Արձանագրվել է թվով 473 իրավախախտման դեպք, որոնցից թվով 258-ում կիրառվել է վարչական տույժ, որի համար նշանակվել է 17,550,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

ՀՀ վարչապետի հանձնարարականներ

Ստացվել են ստուգումներ իրականացնելու թվով 2 հանձնարարական՝ 7 ընկերություններում ստուգումներ իրականացնելու նպատակով, մասնավորապես՝

- «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին ենթակա թվով 4 և պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող թվով 1 կազմակերպություններում:

  Արդյունքում 2 տնտեսավարող սուբյեկտ ենթարկվել է վարչական տույժի 950,000 ՀՀ դրամի չափով, իսկ 1 տնտեսավարող սուբյեկտի նկատամբ 2024 թվականին կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշում՝ 350,000 ՀՀ դրամի չափով, որոնցից 2 տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ հաշվարկվել է 378,936 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման վնաս: 1 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման արդյունքում հայտնաբերվել է 1,273,300 տոննա թափոնների ծավալ՝ շուրջ 99,317,400 ՀՀ դրամի չափով, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե: 1 տնտեսավարող սուբյեկտի մոտ խախտումներ չեն հայտնաբերվել, իսկ 1 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգումը կասեցվել է:

- Կոտայքի մարզի տարածքում հանքարդյունաբերությամբ զբաղվող թվով 2 տնտեսավարող սուբյեկտի մոտ: Իրականացված ստուգումների արդյուքներով, 1 տնտեսավարող սուբյեկտի տնօրենը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 930,000 ՀՀ դրամի չափով: Տնտեսավարող սուբյեկտներին ներկայացվել է շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցման պահանջ՝ ընդհանուր 34,270,304 ՀՀ դրամի չափով: Իրականցված ստուգման արդյունքում պարզվել է նաև, որ տնտեսավարող սուբյեկտներից մեկի տեղամասում գտնվող ջարդիչ կայանը տեղադրված է ավտոմայրուղու կենտրոնից 70 մետրը չգերազանցող հեռավորության վրա, իսկ արդեն արտադրված խիճը և ավազը տեղադրված են ճանապարհի կողեզրից 10 մետրը չգերազանցող հեռավորության վրա, ինչը համարվում է «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի և 16-րդ հոդվածի գ) կետի պահանջների խախտում: Նշված տեղեկատվությունը փոխանցվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հայաստանի Հանրապետությունում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով գործում է լիազոր մարմնի կողմից տրամադրված թվով 24 ընդերքօգտագործման իրավունք՝

Սյունիքի մարզ՝ 10,

Լոռու մարզ՝ 6,

Վայոց ձորի մարզ՝ 3,

Կոտայքի մարզ՝ 3,

Գեղարքունիքի մարզ՝ 1,

Արագածոտնի մարզ՝ 1:

Ինչպես նաև մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար գործում է լիազոր մարմնի կողմից տրամադրված թվով 10 իրավունք՝

Սյունիքի մարզ՝ 5,

Արագածոտնի մարզ՝ 1,

Վայոց ձորի մարզ՝ 2,

Տավուշի մարզ՝ 1

Լոռու մարզ՝ 1:

Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով գործում է լիազոր մարմնի կողմից տրամադրված թվով 376 ընդերքօգտագործման իրավունք: Ստորև ներկայացվում է բաշխվածությունն ըստ մարզերի՝

Աղյուսակ 24

Հ/Հ	Մարզի անվանումը	Թույլտվությունների քանակը
1	Երևան	19
2	Տավուշ	17
3	Լոռի	36
4	Շիրակ	52
5	Գեղարքունիք	22
6	Արագածոտն	55
7	Սյունիք	29
8	Վայոց Ձոր	13
9	Կոտայք	54
10	Արմավիր	33
11	Արարատ	46

Լիազոր մարմնի կողմից տրամադրվել է ոչ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով գործում է երկրաբանական ուսումնասիրության թվով 41 իրավունք:

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով գործում է լիազոր մարմնի կողմից տրամադված թվով 34 իրավունք:

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար գործում է լիազոր մարմնի կողմից տրամադրված թվով 1 արտոնագիր:

Ընդհանուր վերահսկողական արդյունքներ

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում ընդհանուր առմամբ արձանագրվել է՝

➢ 638 իրավախախտման դեպք,

- Ընդեքրի մասին ՀՀ օրենսգրքի խախտում 237
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի խատում 50
- Հողային օրենսգրքի խախտում 66
- «Թափոնների մասին» ՀՀ օրենքի խախտում 32
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի խախտում 8
- Հարկային օրենսգրքի խախտում 109
- «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի խատում 19
- Ջրային օրենսգրքի խախտում 6
- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին » ՀՀ օրենքի խախտում 1
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի խախտում 10
- «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի խախտում 3
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի խախտում 2

ԲԸՏՄ-ի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի

- շրջանակներում հայտնաբերված ապօրինի արդյունահանման դեպք 95

➢ հաշվարկվել է շրջակա միջավայրին և պետությանը պատճառված վնաս 2,140,831,279 ՀՀ դրամի չափով, որից.

- հողին պատճառված վնասը կազմել է 218,174,673 ՀՀ դրամ
- մթնոլորտին պատճառված վնասը կազմում է 121,359,359 ՀՀ դրամ
- ջրի աղտոտվածության վնասը կազմում է 378,631 ՀՀ դրամ
- պետությանը պատճառված վնաս՝ 1,800,918,616 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից ապօրինի արդյունահանված օգտակար հանածոյի ծավալի հիման վրա միայն 20 դեպքով)

Ստուգումների արդյունքներ

2023 թվականի ընթացքում իրականացվել են 78 ստուգում, որից 67-ը ավարտվել են (21 տարեկան ծրագիր, 46 արտաժրագրային), 10-ը գտնվում է ընթացքում, իսկ 1 ընկերությունում հանձնարարագրերն ուժը կորցրած են ճանաչվել:

Ընդհանուր ստուգումների արդյունքում՝

➢ արձանագրվել է 543 իրավախախտման դեպք,

➢ կայացվել է 146 վարչական տույժի որոշում,

➢ կիրառվել է 16, 790,000 ՀՀ դրամ վարչական տուգանք,

➢ հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ 149,934,995 ՀՀ դրամի չափով,

➢ պետությանը պատճառված վնաս՝ 477,147,174 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից 9 դեպքով)

Ընդերքի շահագործման վերահսկողության ուղղությամբ

Իրականացվել է 53 ստուգում, որից 23-ը տարեկան ծրագրով՝ 18-ն ավարտվել է, 5–ը գտնվում է ընթացքի մեջ է, 30 արտաժրագրային ստուգումից 28-ը՝ ավարտվել է, իսկ 2-ը գտնվում է ընթացքի մեջ: 1 հանձնարարագիրն ուժը կորցրած է ճանաչվել:

Ավարտված 46 ստուգման արդյունքում կազմվել է 45 ստուգման ակտ և 1 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու 36 հանձնարարական:

- արձանագրվել է 484 իրավախախտման դեպք,
- կայացվել է 110 վարչական տույժի որոշում,
- կիրառվել է 12,610,000 ՀՀ դրամ վարչական տուգանք,
- հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 148,393,510 ՀՀ դրամի չափով,
- պետությանը պատճառված վնաս՝ 477,147,174 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից 9 ստուգման դեպքով),
- պետությանը պատճառված վնաս՝ 1,323,771,442 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից 11 վարույթներով):

Հանքային ջրերի և երկրաբանական ուսումնասիրությունների վերահսկողության ուղղությամբ

Իրականացվել է 25 ստուգում, որից 3-ը տարեկան ծրագրով ավարտվել ՝ և 22 արտածրագրային ստուգումից 20-ը՝ ավարտվել է, իսկ 2-ը գտնվում է ընթացքի մեջ:

Ավարտված 23 ստուգման արդյունքում կազմվել է 22 ստուգման ակտ և 1 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու 3 հանձնարարական.

- արձանագրվել է 59 իրավախախտման դեպք,
- կայացվել է 36 վարչական տույժի որոշում,
- կիրառվել է 4,180,000 ՀՀ դրամ վարչական տուգանք,
- հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ 1,541,485 ՀՀ դրամի չափով:

22 ստուգումից՝ 22-ի հիմքն է հանդիսացել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությունները, կապված ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.5-րդ մասի համաձայն առաջնային երկրաբանական փաստագրման նյութերի և փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատմանի, ինչպես նաև դրանց արժանահավատության հավաստումների հետ:

Բացի վերը նշված աշխատանքներց Ընդերքի վերահսկողության ոլորտում իրավապահ մարմինների հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է 56 մարկշեյդերական չափագրում:

Տնտեսավարող սյուբեկտների գրությունների հիմքով Պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ համատեղ իրականացվել են 13 կապարակնիքի պոկման և վերակապարակնքման աշխատանքներ:

Հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի վերաբերյալ

2023 թվականի ընթացքում ԲԸՏՄ-ի կողմից հայտնաբերվել է ապօրինի ընդերքօգտագործման 113 դեպք, որից 18-ը հայտնաբերվել է ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններում իրականացված ստուգումների արդյունքում, իսկ 95-ը ԲԸՏՄ-ի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում: Հայտնաբերված ապօրինի արդյունահանման և ընդերքօգտագործման ընթացքում հայտնաբերված թաքցված ծավալը կազմում է 2,787, 275 մ^3: Հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման դեպքերից միայն 20-ով Պետական եկամուտների կոմիտեի կողմից հաշվարկված պետությանը պատճառված վնասը կազմում է 1,800,918,616 ՀՀ դրամ: Մնացած դեպքերով գործերը գտնվում են նախաքննության փուլում և պետությանը պատճառված վնասի հաշվարկ դեռևս չի իրականացվել:

Ստորև ներկայացվում է հայտնաբերված ապօրինի արդյունահանման դեպքերը՝ ըստ մարզերի

Աղյուսակ 25

Հ/Հ	Մարզի անվանումը	քանակը
1	Արմավիր	31
2	Արագածոտն	14
3	Արարատ	19
4	Գեղարքունիք	14
5	Լոռի	3
6	Կոտայք	9

7	Շարակ	7
8	Սյունիք	10
9	Վայոց ձոր	2
10	Տավուշ	4

Ստորև ներկայացվում է նաև վերը նշված ծավալի և դեպքերի բացվածքը՝ ըստ օգտակար հանածոյի

Աղյուսակ 26

Հ/Հ	Օգտակար հանածոյի տեսակը	Ծավալը մ³	Քանակը
1	բազալտ	432,768	15
2	ավազակոպճային խարնուրդ	1 192,263.5	63
3	կրաքար	53,303	1
4	տուֆ	307,257.7	11
5	տրավերտին	517	1
6	պեռլիտ	323,864.8	2
7	մարմար	45,550	1
8	հրաբխային խարամ	34,616.8	2
9	հողագրունտ	397,134.3	17
Ընդհանուր		**2,787,275.4**	**113**

Աղյուսակ 27

	Վնաս	Քանակ	Ծավալ
Արմավիր	**154,338,824.1**	**31**	**1,053,733.7**
տուֆ	190,534.0	1	1,470.0
բազալտ	13,293,617.0	3	82,346.2
ԱԿԽ	140,854,673.1	27	969,917.5
Արագածոտն	**36,788,047.5**	**14**	**343,391.0**
տուֆ	34,209,317.5	7	299,574.7
հող	19,795.0	5	4,531.3
ԱԿԽ	2,558,935.0	2	39,285.0
Արարատ	**34,989,968.8**	**19**	**133,628.0**
հող	40,917.0	2	876.0
ԱԿԽ	33,997,331.8	16	132,235.0
Տրավերտին	951,720.0	1	517.0

Գեղարքունիք	**1,323,413.0**	**14**	**75,910.4**
խարամ	0.0	1	1,156.8
բազալտ	828,361.0	2	2,961.3
ԱԿԽ	72,634.0	9	17,680.0
տուֆաավազաքար	0.0	1	380.0
հող	422,418.0	1	468.0
կրաքար			53,264.3
Լոռի	**7,095,283.0**	**3**	**33,763.0**
խարամ	0.0	1	33,460.0
հող	7,095,283.0	2	303.0
Կոտայք	**45,248,858.1**	**9**	**690,617.7**
Մարմար	0.0	1	45,550.0
ԱԿԽ	22,694,438.0	3	9,726.0
բազալտ	16,176,414.0	3	311,243.9
հող	5,848.1	1	233.0
պեռլիտ	6,372,158.0	1	323,864.8
Շիրակ	**3,181,335.0**	**7**	**382,949.5**
բազալտ	1,743,726.0	2	9,106.0
ԱԿԽ	0.0	1	12,088.0
հող	1,343,628.0	3	357,139.0
տուֆ	93,981.0	1	4,616.5
Սյունիք	**28,135,215.0**	**10**	**65,392.6**
բազալտ	23,779,289.0	2	25,062.6
ԱԿԽ	4,355,926.0	6	11,332.0
հող	0.0	2	28,998.0
Վայոց ձոր	**49,123.2**	**2**	**5,841.5**
բազալտ	49,123.2	1	1,255.5
հող	0.0	1	4,586.0
տուֆ			
Տավուշ	**908,300.0**	**4**	**2,048.0**
բազալտ	726,117.0	2	1,119.0
կրաքար	0.0	1	39.0
տուֆ	550.0	1	890.0

ԲԸՏՄ-ի կողմից հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման 113 դեպքերից 18-ը հայտնաբերվել է ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններում իրականացված ստուգումների արդյունքում: Վերը նշված 18 ստուգումների արդյունքում

հայտնաբերված ապօրինի արդյունահանված և ընդերքօգտագործման ընթացքում թաքցված օգտակար հանածոյի ծավալը կազմել է 926,514 մ^3:

Ստորև ներկայացվում է վերը նշված ծավալի բացվածքը՝ ըստ օգտակար հանածոյի

Աղյուսակ 28

Հ/Հ	Օգտակար հանածոյի տեսակը	Ծավալը մ^3
1	բազալտ	395,716
2	ԱԿԽ	118,103
3	կրաքար	53,264
4	տուֆ	142,278
5	տրավերտին	517
6	պեռլիտ	216,636
Ընդհանուր		**926,514**

Ստուգումների արդյունքում հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման 18 դեպքերից միայն 9-ով Պետական եկամուտների կոմիտեի կողմից ապօրինի արդյունահանված օգտակար հանածոյի ծավալի հիման վրա հաշվարկված պետությանը պատճառված վնասը կազմում է 477,147,174 ՀՀ դրամ: Մնացած դեպքերով պետությանը պատճառված վնասի հաշվարկ դեռևս չի իրականացվել:

ԲԸՏՄ-ի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում հայտնաբերվել է նաև 95 ապօրինի արդյունահանման դեպք, որով հաշվարկված օգտակար հանածոյի ծավալը կազմում է 1,744,244 մ^3: Նշված 95 դեպքերով ԲԸՏՄ-ի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասը կազմում 189,977,667 ՀՀ դրամ: Բացահայտված ապօրինի արդյունահանման դեպքերի գերակշիռ մեծամասնությունը իրականացվել է նաև համայնքային նշանակության հողամասերում: Հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման 95 դեպքերից միայն 11-ով Պետական եկամուտների կոմիտեի կողմից ապօրինի արդյունահանված օգտակար հանածոյի ծավալի հիման վրա հաշվարկված պետությանը պատճառված վնասը կազմում է 1,323,771,442 ՀՀ դրամ: Մնացած դեպքերով պետությանը պատճառված վնասի հաշվարկ դեռևս չի իրականացվել: Մնացած դեպքերով գործերը գտնվում են

նախաքննության փուլում և պետությանը պատճառված վնասի հաշվարկ դեռևս չի իրականացվել: Ստորև ներկայացվում է վերը նշված ծավալի բացվածքը՝ ըստ օգտակար հանածոյի

Աղյուսակ 29

Հ/Հ	Օգտակար հանածոյի տեսակը	Ծավալը մ^3	Վնասը
1	բազալտ	37,052.0	3,097,485.2
2	ԱԿԽ	1,064,872.4	175,366,077.5
3	հողագրուն	397,134.3	8,927,889.1
4	կրաքար	39.0	0.0
5	մարմար	45,550.0	0.0
6	խարամ	34,616.8	0.0
7	տուֆ	164,979.7	2,586,216.0
Ընդհանուր		**1,744,244.2**	**189 977 667.8**

Արաքսի ավազանում իրականացված ստուգումների վերաբերյալ

Արաքս գետի ավազանում ստուգումներ են իրականացվել ընդերքօգտագործման իրավունք ունեցող «Արաքսի ավազան», «Լցոն», «Սաշա և Սպարտակ» ՍՊ ընկերություններում, ինչպես նաև իրականացվել է դիտարկում «Վինեկա» ՍՊ ընկերությունում:

Իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված ապօրինի արդյունահանված ավազի ծավալը կազմում է 69,179 մ^3: Ընկերությունների տնօրենների նկատմամբ կիրառվել է վարչական տույժ 980,000 ՀՀ դրամի չափով, իսկ շրջակա միջավայրին պատճառված վնասը կազմել է 4,286,708 ՀՀ դրամ:

«Սաշա և Սպարտակ» և «Վինեկա» ՍՊ ընկերություններում իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել է Արաքս գետի հունի փոփոխություն: ԲԸՏՄ-ի կողմից երկու դեպքերով առաջարկություն է ներկայացվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հիշյալ ընկերությունների ընդերքօգտագործման իրավունքները դադարեցնելու վերաբերյալ, ինչի հիման վրա

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամաններով նշված ընդերքօգտագործման իրավունքները դադարեցվել են:

Բացի այդ, քրեական գործերի շրջանակում Ազգային անվտանգության ծառայության և Քննչական կոմիտեի հետ համագործակցությամբ ԲԸՏՄ-ի կողմից ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում Արաքս գետի ողջ երկայնքով գործող ընդերքօգտագործման իրավունք ունեցող բոլոր 13 ընդերքօգտագործողներին ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերում (շուրջ 40 կմ) իրականացվել են չափագրման աշխատանքներ: Չափագրման արդյունքում հայտնաբերված ապօրինի արդյունահանված ավազի ծավալը կազմում է 32,513 մ^3, հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 1,087,137 ՀՀ դրամ:

Բացի այդ, ԲԸՏՄ-ի նախաձեռնությամբ կատարված օրթոգեոմետրիկ լուսանկարների հիման վրա տոպոհանույթային աշխատանքներ են իրականացվել Արաքս գետի ավազանում Արաքս գետի ողջ երկայնքով ընդերքօգտագործողներին ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերում և հարակից տարածքներում, ինչի արդյունքում ԲԸՏՄ հետագա վերահսկողական աշխատաքների արդյունքում կունենա Արաքս գետի հունի ելակետային տվյալները 2023 թվականի դրությամբ: Նշված աշխատանքների արդյունքում ԲԸՏՄ կկարողանա ինչպես բացահայտել Արաքս գետի հունի հնարավոր փոփոխությունները, այնպես էլ հնարավոր վտանգի դեպքում կանխել այն:

Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ իրականացված ստուգումներ

2023 թվականի ընթացքում ՀՀ վարչապետի հանձնարարականով ԲԸՏՄ կողմից իրականացվել է ստուգում թվով 3 ընկերություններում:

«Միկմետալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրում և «ՄԼ Մայնինգ» ՍՊ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Կոտայքի մարզի Կարապիծորի լիթոիդային պեմզայի հանքավայրում իրականացված ստուգումների արդյունքում ընկերությունների

տնօրենների նկատմամբ կիրառվել է վարչական տույժ 930,000 ՀՀ դրամի չափով, իսկ ընկերություններին ներկայացված շրջակա միջավայրին պատճառված վնասը կազմել է 34,270,304 ՀՀ դրամ:

Ընկերություններից մեկում հայտնաբերվել է ընդերքօգտագործման թույլտվության սահմաններից դուրս ապօրինի արդյունահանված 9,288 մ^3 ծավալ, իսկ թաքցված ծավալը կազմել է 36,180 մ^3:

«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից շահագործվող Սոթքի ոսկու հանքավայրում ստուգումը դեռևս չի ավարտվել:

Հաճախ հանդիպող խախտումները

Իրականացված վերահսկողական գործողությունների արդյունքում ընդերքօգտագործման ոլորտում արձանագվել են հետևյալ հիմնական խախտումները, մասնավորապես՝

- Իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է, որ 54 ընկերություններ չեն վարում երկրաբանական, մարկշեյդերական քարտեզագրում, ամենօրյա շարժի գրանցամատյան և այլ փաստագրություններ: Երկրաբանական և մարկշեյդերական քարտեզագրումը (երկրաբանական քարտեզներ՝ երկրակեղևի որևէ տեղամասի երկրաբանական կառուցվածքը արտահայտող գծագրեր, մարկշեյդերական գործ՝ հանքափորվածքներում կատարված տարածական-երկրաչափական չափումների տվյալները՝ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ժամանակ ու դրանց փաստաթղթավորումը) ունեն առանցքային նշանակություն հանքարդյունաբերության գործընթացում, որի բացակայությունը հանգեցնում է նրան, որ ընկերությունների կողմից ընդերքօգտագործման հետ կապված գործունեությունը ծավալվում է լեռնահատկացման ակտով և օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությամբ տրամադրված ընդերքի սահմաններից դուրս և չեն ապահովվում օգտակար հանածոների պաշարների շարժի հավաստի հաշվառում: Հայտնաբերված բոլոր դեպքերով ստուգումների արդյունքում ընկերություններին

տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ խախտումները վերացնելու համար:

- Իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է, որ 12 ընկերություններ ընդերքօգտագործման աշխատանքները չեն իրականացնում օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ չեն պահպանում նախագծով սահմանված հանքաստիճանի և հանքախորշի բարձրությունը, լայնությունը, խորությունը և երկարությունը, ինչը հանգեցնում է հանքավայրերի ոչ ճիշտ շահագործմանը:
- Ընկերությունների կողմից ընդերքօգտագործման հետ կապված գործունեությունն իրականացվում է առանց հողատարածքի օգտագործման պայմանագրի և/կամ առանց հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու: Ստուգումների արդյունքում արձանագրվել է առանց հողատարածքի օգտագործման պայմանագրի և/կամ առանց հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու 26 դեպք: Նշված բոլոր դեպքերով ընկերություններին տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ խախտումները վերացնելու համար: Բացի այդ, ընկերություններին հանձնարարվել է ընդերքօգտագործման աշխատանքներ չիրականացնել մինչև հիշյալ խախտումները վերացնելը:
- Համայնքներում համայնքի ավագանու կամ ղեկավարի որոշմամբ առանց ընդերքօգտագործման իրավունքի առկայության տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվում է համայնքային հողամասերի սահմաններում պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման, քարհավաքման և սելավատարերի մաքրման աշխատանքների թույլտվություն՝ առանց լիազոր մարմնին տեղյակ պահելու: ԲԸՏՄ-ի կողմից բացահայտվել է նման 5 դեպք: Նշված դեպքերում անհրաժեշտ է խստագույնս առաջնորդվել Կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում ընդերքօգտագործման կարգը

սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1932-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 152-Ն որոշման պահանջներով: Նշված խնդիրը բարձրացվել է նաև ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 27-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու, միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմը հաստատելու մասին» թիվ 342-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի աշխատանքների շրջանակում, ինչի արդյունքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միջոցներ են ձեռնարկվել համայնքներին իրազեկելու ուղղությամբ:

- Արձանագրվել են ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերի, հողամասերի կոորդինատների անճշտությունների և անհամապատասխանության 9 դեպք, մասնավորապես՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությամբ տրամադրված կոորդինատները չեն համապատասխանում պաշարների հաշվարկմանը կից երկրաբանական քարտեզներով նշված տեղամասերի հետ (շեղումները երբեմն կազմում են տասնյակ կիլոմետրեր): Կոնկրետ դեպքով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ աշխատանքային խումբ ստեղծելու միջոցով իրականացվել է ճշգրտում:

Մետաղական հանքավայրերի վերահսկողություն

Վերահսկողական գործընթացները մետաղական հանքավայրերում առավել արդյունավետ դարձնելու նպատակով հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մեջ ներառվել է ԲԸՏՄ-ի կողմից առաջարկված փոփոխությունը:

Հանքավայրերի վերահսկում

- ✓ Արդունահանման որակի ապահովում և հանքաքարի որակի վերահսկում:
- ✓ Տվյալների մշակման, վերլուծության և մոդելավորման ծրագրային ավտոմատացում:

Որակի վերահսկողական գործընթացները և կառավարման համակարգերը կարևոր նշանակություն ունեն հանքարդյունաբերության արտադրողականության համար, քանի որ արտադրանքի որակի նույնիսկ 1% տարբերությունը կարող է մեծ փոփոխությունների հանգեցնել կորզվող մետաղների վերջնական որակի և ծավալների վրա:

Սա գործընթաց է, որը պահանջում է իրական ժամանակում տվյալների հավաքագրում: Սա շատ կարևոր է որակի կորուստը նվազագույնի հասցնելու համար: Իրական ժամանակի տվյալների հավաքագրումը նշանակում է, որ ԲԸՏՄ նաև տեղյակ կլինի իրական ժամանակում որակի անկման մասին: Տվյալների հոսքերը և գործընթացների ավտոմատացումը որակի վերահսկողությունը դարձնում են ակտիվ, շարունակական գործընթաց: Հավաքված բոլոր արդյունքները միավորելով կենտրոնացված տվյալների բազայում, հետագայում հավաքագրված տվյալների հիման վրա ստեղծվում են հանքավայրի Grid QA/QC և 3 D մոդուլները:

Ի վերջո, ճշգրիտ վերահսկողական գործընթացը նվազագույնի կհասցնի կողմնակալ կամ չներկայացված մետաղների թաքցնելու հնարավորությունները:

Այսպիսով, արդյունքում ԲԸՏՄ նշված համակարգի և դրոնների միջոցով ունենալու է հնարավորություն լիարժեք վերահսկել մետաղական հանքավայրերի շահագործումն իրական ժամանակում:

Առաջարկված օրենսդրական փոփոխությունները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1694-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1423-Ն որոշմամբ հաստատված Բնապահպանության և ընդերքի ԲԸՏՄ-ի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերում, մասնավորապես՝

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին են համապատասխանեցվել շահագործվող հանքավայրերում (տեղամասերում) կոնդիցիաները և պաշարները վերագնահատման ենթարկելու և լիազոր մարմնի վերահաստատմանը ներկայացնելու ժամկետները, օգտակար հանածոների

արդյունահանման ընթացքում հողի բերրի շերտի օգտագործման, պահպանման նորմերի ու պահանջների պահպանումը ստուգելու դրույթները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 24-րդ և 25-րդ կետերի պահանջներով՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման իրավունքի դեպքում՝ արդյունահանման հետևանքով գետի հունի փոփոխությունը, հետևաբար նաև անդրսահմանային ազդեցությունը բացառելու նպատակով յուրաքանչյուր ամիս տոպոգրաֆիական հանույթային աշխատանքների կատարման միջոցով իրականացնել գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումներ: Իրականացվող մշտադիտարկումների արդյունքներով գետի հունի վիճակի և կայունության փոփոխություններ (այդ թվում՝ ոչ իր գործունեության հետևանքով) հայտնաբերելու դեպքում անհապաղ դադարեցնել հանքավայրի շահագործման աշխատանքները և մշտադիտարկումների արդյունքները երկօրյա ժամկետում ներկայացնել ընդերքօգտագործման բնագավառի լիազոր մարմին, արտակարգ իրավիճակների բնագավառի լիազոր մարմին, շրջակա միջավայրի պահպանության բնագավառի լիազոր մարմին և բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող ԲԸՏՄ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ համապատասխան լրացումներ են կատարվել ստուգաթերթերում:

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՀԲ-ն ՏԲ-ների հետ մասնակցել է 45 տնտեսավարող սուբյեկտների մոտ իրականացված ստուգումներին, որի ընթացքում կատարվել է արտահոսքի ջրերի 24, հողի՝ 20 նմուշների նմուշառում և 115 գազային միացությունների չափագրում: ԼՀԲ-ն անալիտիկ հետազոտություններ է իրականացրել նաև ՏԲ-ների կողմից նմուշառված հողի 43 և ջրի՝ 33 նմուշներում: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է ջրի 57

նմուշի 585 անալիզ, հողի 63 նմուշի՝ 264 անալիզ, մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի և փոշու 115 չափագրում:

1. Որակական և քանակական անալիտիկ հետազոտություններ են իրականացվել արտահոսքերի և մակերևութային ջրերում, որի արդյունքում պարզվել է, որ հոսքաջրերում կենսաբանական մաքրման կայանների բացակայության պատճառով բարձր է թթվածնի կենսաբանական պահանջարկը, որը վտանգ է հանդիսանում ջրային կենսաբազմազանության համար: Շրջակա միջավայրի համար վտանգ են ներկայացնում նաև քարի մշակման արտադրամասերը, որոնցից մեծ քանակությամբ կախյալ մասնիկներ են արտահոսում մակերևութային ջրեր:
2. Մթնոլորտային օդ արտանետվող գազային միացությունների և փոշու չափագրումների արդյունքում պարզվել է, որ նորից բնապահպանական տեսանկյունից վտանգ են ներկայացնում ոչ մետաղական հանքավայրերի շահագործումը, որոնց ջարդիչ կայանքներից, տեսակավորման հոսքագծերից արտանետվում է անօրգանական փոշու մեծ քանակություն: Կատարված 115 չափագրումներից, որից 63-ը փոշի, 52-ը՝ գազային միացություններ, սահմանային թույլատրելի արտանետումները մինչև 5 անգամ գերազանցել են 7 պարամետր, 5-ից ավել անգամ՝ 5 պարամետր:
3. Ջրի նմուշներում որոշված 585 պարամետրերից 89-ը գերազանցել են սահմանային թույլատելի արտահոսքը մինչև 5 անգամ, ևս 89 պարամետր գերազանցել է սահմանային թույլատելի արտահոսքը 5-ից ավել անգամ:
4. Նույնականացման նպատակով անալիտիկ հետազոտություններ են իրականացվել տարբեր մարզերից ապօրինի տեղափոխված հողերից վերցրած նմուշներում:

Կատարված հետազոտությունները՝ ըստ 2021-2023 թվականների համեմատականի

Աղյուսակ 30

Տարի			2021	2022	2023
Մթնոլորտային օդի	**քանակը**		**68**	**49**	**115**
	ՍԹԱ չափաքանակները գերազանցել է	մինչև 5 անգամ	6	6	7
		5 և ավել անգամ	12	0	5
Ջրի	**քանակը**		**1010**	**479**	**585**
	ԹՍԱ չափաքանակները գերազանցել է	մինչև 5 անգամ	34	47	89
		5 և ավել անգամ	27	57	89
Հողի	**քանակը**		**47**	**36**	**264**
	վնասակար նյութերի պարունակությունը գերազանցել է ՍԹԿ		0	0	0

Լաբորատոր հագեցվածության ապահովում

Լաբորատոր հետազոտությունների իրականացման և գազային միացությունների չափագրման համար 2023 թվականին ԲԸՏՄ-ը ձեռք է բերել սարքավորումներ, որոնք հնարավորություն են տալիս ստանալ ավելի ճշգրիտ արդյունքներ և կրճատել աշխատաժամանակը:

- Փոշու չափագրման համար փոքր արագությունների ասպիրատոր АПВ 4, որի միջոցով արտանետման աղբյուրներից կատարվում է փոշու չափագրում: Մինչ այժմ սարքի բացակայության պատճառով փոշու քանակությունը կամ չի չափագրվել, կամ չափագրվել է տնտեսավարողի լաբորատորիայի հետ համատեղ՝ իրենց սարքավորումներով:

Նկար 1

- Ծխագազերի նմուշառման համար Testo 350 գազանալիզատոր, որը հնարավորություն է տալիս արտանետման աղբյուրում անմիջապես չափելու գազի հոսքի արագությունը, ածխածնի, ազոտի, ծծմբի օքսիդների, ծծմբաջրածնի, ածխաջրածինների կոնցենտրացիաները: Եթե նախկինում հաշվարկների համար գազի հոսքի արագության արժեքը վերցվում էր տնտեսավարողի արտանետման թույլտվություններից, ներկայումս հնարավորություն ունենք անմիջապես չափելու հոսքի փաստացի արագությունը և վնասակար նյութերի կոնցենտրացիաները:

Նկար 2

- Ջրի թթվածնի կենսաբանական պահանջարկի որոշման անալիզատոր, որի մեծությունը հանդիսանում է օրգանական նյութերով ջրի աղտոտման չափանիշ և հիմք է հանդիսանում շրջակա միջավայրին հասցրած վնասի հաշվարկի: Անալիզատորի բացակայության պատճառով նախկինում կամ չի որոշվել կամ որոշվել է հաշվարկային մեթոդով:

Նկար 3

- Արտահոսքի և մակերևութային ջրերի անալիտիկ հետազոտության համար սպեկտրոֆոտոմետր photoLab 7100 VIS-WTW, որը տալիս է շատ ավելի մեծ քանակությամբ պարամետրեր որոշելու հնարավորություն: Նախկինում շատ պարամետրեր որոշվել են տիտրիմետրիկ եղանակով, ներկայումս հնարավորություն ունենք մեկ սարքի միջոցով ավելի քիչ ժամանակահատվածում որոշելու ավելի մեծ թվով պարամետրեր:

Նկար 4

Լաբորատոր հետազոտությունների իրականացման համար օգտագործվող բոլոր սարքավորումները «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից ենթարկվել են ստուգաչափման:

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման նպատակով ԲԸՏՄ-ի գործունեության վերաբերյալ ըստ ոլորտների տարեկան ծրագրով նախատեսված 15 իրազեկման աշխատանքի փոխարեն

հանրությանը ներկայացվել է վերահսկողության ընթացքում կատարված աշխատանքների մասին 94 հայտարարություն, հաշվետվություն, որոնք հրապարակվել և տարածվել են ԲԸՏՄ-ի պաշտոնական կայքէջում, սոցիալական ցանցերի ԲԸՏՄ-ի պաշտոնական էջերում և ԶԼՄ-ներում (2021թ.-ին նախատեսվել է 4, իրականացվել՝ 10, 2022թ.-ին նախատեսվել է 15, իրականացվել՝ 90):

Նաև հրապարակվել է ԲԸՏՄ-ի գործունեության վերաբերյալ այլ բնույթի 32 տեղեկատվական նյութ, թափուր պաշտոնների մասին 90 հայտարարություն:

2. ԲԸՏՄ-ի գործունեության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացման նպատակով ԲԸՏՄ-ի ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ նախատեսված 4 հարցազրույցի փոխարեն կազմակերպվել է 23-ը (2021թ.-ին նախատեսվել է 8, իրականացվել՝ 25, 2022թ.-ին նախատեսվել է 4, իրականացվել՝ 45):
3. Տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացման, իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկման ապահովման, բնապահպանության և ընդերքի ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման, հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով Երևան քաղաքում և հանրապետության մարզերում նախատեսված 11 իրազեկում-հանդիպման փոխարեն կազմակերպվել է 13-ը, որոնց ընթացքում ներկայացվել են «Ընդերքի մասին», «Ջրային», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքերում, «Բնապահպանական վերահսկողության մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքներում և այլ ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխություններն ու լրացումները (մասնակցել է 162 ներկայացուցիչ, որից՝ 134 տնտեսավարող, 28 որսորդական, ձկնորսական, կառուցապատողների ՀԿ-ներ):

Տարվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվել են ուղեցույցեր, իրազեկման թերթիկներ, բուկլետներ:

(2021թ.-ին նախատեսվել է 12, իրականացվել՝ 12, 2022թ.-ին նախատեսվել է 11, իրականացվել՝ 11):

4. ԲԸՏՄ-ի գործունեության լուսաբանման, հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով ծրագրով նախատեսված 40 մամուլի հաղորդագրության փոխարեն հրապարակվել է 94-ը, որոնց տարածումը ԶԼՄ-ներում հասել է 1,486-ի (2021թ.-ին նախատեսվել է 24, իրականացվել՝ 129, 2022թ.-ին նախատեսվել է 40, իրականացվել՝ 103):

   Ամենօրյա մշտադիտարկման արդյունքում ուսումնասիրվել է ոլորտի վերաբերյալ 1,354 նյութ, որոնք ամփոփվել և վերլուծվել են, պատրաստվել է օրվա մամուլի տեսություն, ստեղծվել համակարգված արխիվ (2021թ.-ին՝ 870, 2022թ.-ին՝ 1,242):

5. Իրականացվել է թեժ գծի 119 հեռախոսահամարի և սոցիալական ցանցի ԲԸՏՄ-ի պաշտոնական էջի սպասարկում և վարում, որի ընթացքում գրանցվել է 391 ահազանգ (2021թ.-ին՝ 255, 2022թ.-ին՝ 219), որից՝
   - թեժ գծի 119 հեռախոսահամարի միջոցով՝ 276 (2021թ.-ին՝ 120, 2022թ.-ին՝ 151), որից 194-ով ահազանգ, 82-ով տրվել է խորհրդատվություն (2021թ.-ին՝ 56, 2022թ.-ին՝ 74):
   - ԶԼՄ-ների և սոցիալական հարթակների միջոցով՝ 115 (2021թ.-ին՝ 135, 2022թ.-ին՝ 68):

Ստացված 309 ահազանգով կազմվել են զեկուցագրեր, որոնց հիման վրա հարուցվել է 218 վարչական վարույթ (128-մթնոլորտային օդի, 9-ջրային ռեսուրսների, 6-հողերի, 2-ընդերքօգտագործման, 13-կենդանական, 44-բուսական աշխարհի օգտագործման և պահպանության, 1-պետական փորձաքննության, 1-բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարների, 14-ընթացքի մեջ է), կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին 51 որոշում, ընդհանուր՝ 7,400,000 ՀՀ դրամի չափով, 12 դեպքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկի չափը կազմել է 3,797,686 ՀՀ դրամ: Կասեցվել է 8-ը, կարճվել 133-ը:

Ահազանգերից 2-ի հիման վրա իրականացված ստուգումներից 1-ով նշանակվել է 300,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, 1-ն ընթացքի մեջ է:

Իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությամբ պայմանավորված 89 զեկուցագրով վարույթ չի հարուցվել:

ԲԸՏՄ-ի պաշտոնական կայքէջում հրապարակվել է 2022թ տարեկան և 2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում ԲԸՏՄ-ի ստացված տեղեկություն ստանալու հարցումների, դիմում-բողոքների վերաբերյալ վիճակագրական տվյալները (հղում՝ https://www.ecoinspect.am/hy/statistics):

Պատրաստվել և Յութուբ կայքի ԲԸՏՄ-ի պաշտոնական էջում հրապարակվել է 39 տեսահոլովակ/տեսանյութ (2021թ.-ին՝ 52, , 2022թ.-ին՝ 63):

ԲԸՏՄ-ի պաշտոնական կայքէջում տեղադրվել է azdararir.am մուտք գործելու հղման լողացող կոճակ, ինչպես նաև թարմացվել են կառուցվածքի, նորությունների, կառավարման խորհրդի, թափուր պաշտոնների, օրենսդրության և այլ բաժինները: Ապահովվել է տեղեկատվության հասանելիությունը, հետադարձ կապը, ԲԸՏՄ-ի գործունեության թափանցիկությունը: ԲԸՏՄ-ի պաշտոնական էջում տեղադրվել են մամուլի հաղորդագրություններ, տեսանյութեր, պարզաբանումներ, իրազեկումներ, հայտարարություններ և այլն:

Սոցիալական ցանցի ԲԸՏՄ-ի պաշտոնական էջի հետևորդների թիվն ավելացել է 574-ով, հասնելով՝ 7,044-ի (2021թ.-ին՝ 5,745, 2022թ.-ին՝ 6,470):

- ԲԸՏՄ-ի ղեկավարը, ղեկավարի տեղակալները, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարները հանրապետության 28 դպրոցներում անցկացրել են ԲԸՏՄ-ի գործառույթների և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ բաց դասեր:
- ԲԸՏՄ-ում կազմակերպվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի 4-րդ կուրսի 9 ուսանողի 6-շաբաթյա մասնագիտական պրակտիկա:

- ԲԸՏՄ-ի աշխատակիցները մասնակցել են Երևանի Աշոտ Ղուլյանի (Բեկորի) անվան ավիամոդելավորման դպրոցի հետ համատեղ իրականացված ԱԹՍ-ների հեռակառավարման դասընթացների:
- ԲԸՏՄ-ի ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում անցկացվել է «Ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառումը վերահսկողության ոլորտում» թեմայով ԲԸՏՄ-ի աշխատակիցների մասնագիտական ուսուցման դասընթաց:
- ԲԸՏՄ-ի և Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի համատեղ մշակած մասնագիտական վերապատրաստման մոդուլային ծրագրի շրջանակում կազմակերպվել է ԲԸՏՄ-ի աշխատակիցների վերապատրաստում:
- ԲԸՏՄ-ում տեղի է ունեցել Կովկասի բնության հիմնադրամի (CNF) կողմից անօդաչու թռչող սարքերի համակարգի և սարքավորումների նվիրաբերման միջոցառումը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կարողությունների զարգացման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու և ամրապնդելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք միջազգային կառույցների հետ ձեռք է բերվել փոխհամագործակցության պայմանավորվածություններ՝ ԲԸՏՄ-ի կարողությունների զարգացման, տեղեկատվության փոխանակման, մասնագետների վերապատրաստման, տեխնիկական աջակցության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Կովկասի Բնության Հիմնադրամի կողմից ԲԸՏՄ-ին նվիրաբերվել է 13,444,000 ՀՀ դրամ գումարի չափով գույք, մասնավորապես՝

- 1 անօդաչու թռչող սարք,
- 4 անօդաչու թռչող սարքի մարտկոց

- 1 «Լիդար» տեսախցիկ,
- 1 լիցքավորիճ կայան
- 1 բազային կայան:

Հաշվի առնելով բնապահպանության և ընդերքի ոլորտներում նոր տեխնոլոգիաների կիրառումը, անհրաժեշտություն էր առաջացել անօդաչու թռչող սարքի տակ գտնվող տեղանքի կետերի բարձրությունը չափելու համար տեղադրել լիդարի լազերային հեռավորության որոնիչ: Լիդար հեռաչափերը կարող են հարյուրավոր քառակուսի կիլոմետրեր անցնել, չափելով 10-80 միավոր մեկ քառակուսի մետրի վրա, հնարավոր է ստեղծել շատ մանրամասն թվային տեղանքի մոդել: Լիդար սենսորները կարող են ներթափանցել անտառային ծածկույթ և բուսականություն, որոնք կարող են գրավել արբանյակներից անտեսանելի թաքնված տեղանքը, ինչպես նաև բավարար մանրամասնությամբ գրավել գետնի ծածկը՝ ապահովելով բուսականության փոփոխության դասակարգում և մոնիտորինգ:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Աղյուսակ 31

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ				
1-ին եռամսյակ				
1.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	07.03.2023	01/016/7/1016-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
2.	ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի	07.03.2023	01/016/5/1009-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

	հոկտեմբերի 19-ի թիվ 1343-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1423-Ն որոշման 5-րդ հավելվածում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություն			
2-րդ եռամսյակ				
3.	ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգը սահմանելու մասին» N 1291-Ն որոշման, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	18.04.2023	01/016/7/1790-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմ
4.	«Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 25 հունվարի 2005 թվականի N 91-Ն ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություն	18.05.2023	01/29.1/4/2297-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն և ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
5.	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2410-Ն որոշման վերաբերյալ առաջարկություններ	19.06.2023	01/29.6/4/2873-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
6.	Մթնոլորտային օդ փոշու արտանետումները նվազեցնելու վերաբերյալ առաջարկություն	22.06.2023	01/29.1/1/3020-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

7.	«ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1291-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման վերաբերյալ առաջարկություններ	18.09.2023	01/29.5/1/4920-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Աղյուսակ 32

ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1-ին եռամսյակ				
1.	««Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ	13.01.2023	01/007/2/151-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
2.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1423-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	19.01.2023	01/016/5/246-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
3.	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի լրամշակված փաթեթի վերաբերյալ	06.03.2023	02/016/7/946-2023	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
4.	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ	21.03.2023	01/016/7/1239-2023	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

5.	«Աղետների ռիսկի կառավարման ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ:	23.03.2023	01//1316-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
2-րդ եռամսյակ				
6.	««Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ	12.04.2023	01/016/7/1691-2023	ՀՀ ներքին գործերի նախարարություն
7.	«Ջրային ռեսուրսների պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների հաշվարկման կարգը և վճարման ժամանակացույցը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	17.04.2023	01//1787-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
8.	Ջրօգտագործման թույլտվության տրամադրման, դրա ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, վերանայման, կասեցման, ուժը կորցրած ճանաչելու, դադարեցման կարգերը և ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը, հորատանցքի անձնագրերի, հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 218-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	21.04.2023	01//1886-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
9.	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ	25.04.2023	01/016/7/1898-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

10.	«Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ	26.04.2023	01/007/6/1921-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
11.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ	15.06.2023	01/29.6/4/2884-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
12.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1423-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	15.06.2023	01/29.6/4/2885-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
13.	«Անտառահատման տոմսի և անտառային տոմսի օրինակելի ձևերը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին» հրամանի նախագծի վերաբերյալ	17.06.2023	01/29.3/7/3535-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
14.	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ	20.06.2023	01/29.6/4/2965-2023 01/29.6/4/2966-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ և ՀՀ արդարադատության նախարարություն
15.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդհանուր մասի նախագծի վերաբերյալ	23.06.2023	01/29.6/4/3040-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

16.	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ	26.06.2023	01/29.6/6/3083-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
3-րդ եռամսյակ				
17.	«Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	31.07.2023	01/29.2/12/3743-2023	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
18.	«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կոշտ կենցաղային թափոնների աղբավայրերի շահագործմանը և փակմանը ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	10.08.2023	01/29.1/7/4061-2023	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
19.	«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ	18.08.2023	01/29.3/9/4208-2023 01/29.3/9/4207-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ և ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
20.	«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»	23.08.2023	01/29.6/6/4315-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

	օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ			
21.	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ	03.09.2023	01/007/1048-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
22.	«Հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարինների) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման ու շահագործման, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը, առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակները, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների առանձին չափորոշիչները հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	04.09.2023	01/29.6/6/4560-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
23.	«Մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման	06.09.2023	01/29.1/6/4640-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

	կարգերը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ			
24.	«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ լրացուցիչ առաջարկությունների վերաբերյալ	18.09.2023	01/29.5/1/4918-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
4-րդ եռամսյակ				
25.	«Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ծառայության մասին» օրենքի ընդունման և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ	17.10.2023	01/29.6/6/5510-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
26.	««Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ	19.10.2023	01/29.6/6/5533-2023	ՀՀ ներքին գործերի նախարարություն
27.	«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ	20.10.2023	01/29.6/6/5617-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
28.	«ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 9-ի N 399-Ն որոշման և 2015 թվականի ապրիլի 22-ի N 428-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	31.10.2023	01/29.6/6/5822-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

29.	ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 9-ի N 399-Ն որոշման և 2015 թվականի ապրիլի 22-ի N 428-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	02.11.2023	01/29.6/6/5822-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
30.	«Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման և հաշվառման վերաբերյալ տեղեկատվության ամփոփման, վերլուծման և արխիվացման կարգը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի ապրիլի 22-ի N259 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	24.11.2023	01/29.1/1/6363-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
31.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	28.11.2023	01/29.2/1/6416-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
32.	«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ	04.12.2023	01/29.1/2/6608-2023	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
33.	«ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1291-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	15.12.2023	01/29.5/6/6889-2023	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
34.	«Հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդնման	13.12.2023	01/29.1/9/6830-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

	կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի			
35.	«Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից օրենքների լրամշակված տարբերակների վերաբերյալ (Պ-675-09.10.2023-ՊԱ-011/0)	18.12.2023	01/29.6/6/6867-2023	ՀՀ ներքին գործերի նախարարություն
36.	«Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ	19.12.2013	01/29.1/9/6940-2023	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԲԸՏՄ-ի և ՀՀ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության կրթահամալիրի հետ ձեռք բերված համագործակցության շրջանակներում օրենքով իրենց վերապահված լիազորությունները լիարժեք իրականացնելու նպատակով ԲԸՏՄ-ի (հիսուն) աշխատողները Ոստիկանության կրթահամալիրում մասնակցել են *(թվով 50 աշխատող)* վերապատրաստման դասընթացներին հետևյալ թեմաներով.

- Բնապահպանական վերահսկողության շրջանակներում վարչարարության հասկացությունը և էությունը,
- Վարչարարության հիմմունքների և վարչական վարույթի մասին օրենքի շրջանակներում վարչական վարույթի առանձնահատկությունները,
- Բնապահպանական վերահսկողության ոլորտում զանցանքի և հանցագործության հասկացությունը, հատկանիշները, տարբերությունները և առանձնահատկությունները,
- Բնապահպանական վերահսկողության ոլորտում վարչական իրավախախտումների գործերով վարույթի կարգը,
- Բնապահպանական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմնի քննությանը ենթակա վարչական իրավախախտումները,
- Վնասի հատուցման պահանջը ներկայացնելու որոշման կարգը, առանձնահատկությունները և հիմքը,

- Բնապահպանական վերահսկողության ոլորտում վարչական պատասխանատվությունը ՀՀ-ում,
- Իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող առարկաների և գործիքների բռնագրավման մասին տույժ կիրառել և դրա կատարման կարգը,
- Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, վարչական իրավախախտումներից, դրանց սահմանազատման առանձնահատկությունները:

Ուսումնառության վերջում ԲԸՏՄ-ի աշխատողները հանձնել են ստուգարքներ վերը նշված թեմաներով:

ԲԸՏՄ-ի կարիքների համար օրենքով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում՝ 5,040,000 ՀՀ դրամ արժողությամբ ձեռք է բերվել հետևյալ ապրանքները.

- Անօդաչու թռչող համակարգ DJI M30,
- Տեսախցիկ զումի հնարավորությամբ,
- Լայնանկյուն տեսախցիկ,
- Լազերային հեռաչափ,
- Հեռակառավարման վահանակ:

Պայմանագրի շրջանակներում ԲԸՏՄ 2 աշխատող ուսուցանել են անօդաչու սարքի թռիչքային մասերին և կից ծրագրային ապահովումներին:

ԲԸՏՄ-ի և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հետ ձեռք բերված համագործակցության շրջանակներում օրենքով իրենց վերապահված լիազորությունները լիարժեք իրականացնելու նպատակով ԲԸՏՄ-ի (տաս) աշխատողները Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում մասնակցել են *(թվով 10 աշխատող)* ուսուցման դասընթացներին հետևյալ թեմաներով.

- Ծանոթագրություն ԱԹՍ-ների ակտուալ մոդելների հետ: ԱԹՍ-ների (արգելված թռիչքային տարածքների) սահմանափակումների արգելաբացման հնարավոր տեսակների դիտարկում
- ԱԹՍ-ների օդաչուների ծրագրի բեռնում բջջային հեռախոսների մեջ, հեռակառավարման վահանակների միացում հեռախոսներին: Առաջին թռիչքից առաջ խորը կարգավորումների հնարավորությունների դիտարկում, վահանակներից ծրագրից և ԱԹՍ-ներից օգտվելու մանրամասն կանոնները և հնարավորությունները
- Անվտանգության կանոնների ներկայացում: ԱԹՍ-ների պրակտիկ թռիչք
- Ինչ է ֆոտոգրամետրիան, կիրառման ոլորտները, ինչից է կազմված, ինչ հնարավորություններ ունի և ինչ հնարավորություններ չունի: Անհրաժեշտ նկարահանման մեթոդներ, նկարահանման տեսակներ հատուկ ֆոտոգրամետրիայի համար
- Պրակտիկ թռիչք և նկարահանում: Նկարահանված մատերիալների ճիշտ արտահանում համակարգիչների մեջ հետագա վերամշակման համար
- Կետային ամպերի, տեքստուրաների, և պոլիգոնների մշակման տեսակների վերաբերյալ մանրամասներ: Ծանոթություն Agisoft Metashape ծրագրին, անվճար տրամադրում, նախորդ թեմայով նկարահանված մատերիալների վերամշակման պրակտիկ փորձեր
- Agisoft Metashape-ի ծրագրի հնարավոր կարգավորումներ, հաշվարկման հնարավորություններ, եռաչափ մոդելների արտահանում այլ ծրագրեր
- 3DFlow ընկերության ֆոտոգրամետրիկ վերամշակման ծրագրի հետ ծանոթացում, պրակտիկ փորձեր:
- Վերոնշյալ ծրագրի հնարավորությունների կիրառում ընդերքի օգտագործման վերլուծության մեջ, ծավալների հաշվարկման հնարավորությունների դիտարկում, ֆիզիկական չափսերի, մոդելների արտահանում: ԱԹՍ-ներով նկարահանում գործող ավազի հանքում:

- ԱԹՍ-ներով նկարահանում նույն ավազի հանքը, մասնավորապես նախորդ նկարահանումից հետո քանդած և փորված վայրերը:
- Նախորդ թեմային մշակում ծրագրով, պակասած ծավալների դիտարկում և վիզուալ համեմատում: Հաշվարկներ:
- Ամփոփում: Հարցերի քննարկում, եռաչափ մոդելների և կետային ամպերի արտահանում:

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

2022 թվականին հայտարարված թափուր աշխատատեղերի վերաբերյալ շուրջ 53 մրցույթավին հայտարարություններից համալրվել են 18-ը, իսկ մնացած թափուր հաստիքների մասով հայտարարվել են թափուր աշխատատեղերի վերաբերյալ շուրջ 35 մրցույթային հայտարարություններ:

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2022 թվականի ընթացքում ԲԸՏՄ-ի ղեկավարի կողմից շնորհակալագրով խրախուսվել են 26 աշխատող:
- Ծառայողական քննության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 33-ում

Աղյուսակ 33

Հ/Հ	Ժամանակահատված	Ծառայողական քննության արդյունքում կայացվել է որոշում	
		Կարգապահական խախտման առկայության մասին	Անհետևանք
1	2021	3	4
2	2022	2	6
3	2023	9	7

Հավելված 1

Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ, բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումներ

ԲԸՏՄ վերադասության կարգով բողոքարկված գործեր							
Հ/Հ	***Տնտեսավարողի անուն ազգանունը***	***Բողոք բերելու ամսաթիվ***	***Որոշման համարը***	***Որոշման ամսաթիվը***	***Գումարի չափ***	***կարգավիճակ***	***եռամսյակ***
1	«Անի» ԲԲԸ Տնօրեն Գևորգ Մանուկյան	05.01.2023	Որոշում թիվ 5	03.02.2032	Տուգանք 200,000 Վնաս 5,051,854	Դատական փուլում	1-ին եռամսյակ
2	Հակոբ Դավիթյան	01.02.2023	Որոշում թիվ 11	28.02.2023	Տուգանք 100,000 Վնաս 1,500	Բավարարվել է մասնակի բեկանվել է վարչական տուգանքի վերաբերյալ որոշումը, իսկ վնասի վերաբերյալ որոշումը թողնվել է անփոփոխ	1-ին եռամսյակ
3	Ա/Ձ Սամվել Լաբլաջյան	09.02.2023	Որոշում թիվ 12	06.03.2023	500,000	Դատական փուլում	1-ին եռամսյակ

4	«Քոնթուրգլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ	15.02.2023	Որոշում թիվ 15	03.03.2023		Ստուգման ակտը անփոփոխ թողնելու մասին	1-ին եռամսյակ
5	«Քոնթուրգլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ Տնօրեն Արա Հովսեփյան	15.02.2023	Որոշում թիվ 16	03.03.2023	500,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	1-ին եռամսյակ
6	«Նոր հենդ» ՍՊԸ Ալինա Ռևազյան **4 բողոք**	25.01.2023	Ելից գրություն 06/016/3/1107-2023	14. 03. 2023	Տուգանք 450,000	Դատական փուլում	1-ին եռամսյակ
7	«Արագած» որսորդների և ձկնորսների միություն» ՀԿ Տնօրեն Համլետ Գերյան	31.03.2023	Որոշում թիվ 17	19.04.2023	50,000	Որոշումն թողնվել է անփոփոխ	1-ին եռամսյակ
8	«Մաստեր Ֆարմ» ՍՊԸ Վիկտորյա Պողոսյան	21.03.2023	Որոշում թիվ 18	21.04.2023	50,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	1-ին եռամսյակ
9	«Նյու Հորիզոն Գրուպ ինկ.» ընկերության հայաստանյան մասնաճյուղ Գարիկ Պողոսյան	29. 03. 2023	Որոշում թիվ 20	27. 04. 2023	50,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	1-րդ եռամսյակ

10	«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր Պաշտոնակատար էդմոնդ ղազարյան	11.05.2023	Ելից 02/29.6/4/2814-2023	15. 06. 2023	Ոչ նյութական պահանջ /Ստուգման ակտ/	Բողոքը թողնվել է առանց քննության	2-րդ եռամսյակ
11	«Մարմար» ՍՊԸ Տնօրեն Գեղամ Մաթևոսյան	10. 05. 2023	ելից 06/29.6/4/2307-2023	23. 05. 2023	Ոչ նյութական պահանջ /Ստուգման ակտ/	Բողոքը թողնվել է առանց քննության	2-րդ եռամսյակ
12	«ԵՐԷՑ» ՍՊԸ Տնօրեն Դավիթ Երիցյան	15. 06. 2023	Որոշում թիվ 31	13. 07. 2022	50,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	2-րդ եռամսյակ
13	«Բազմաբերդ» ՍՊԸ Տնօրեն Տիգրան Մանուկյան	10. 07. 2023	Որոշում թիվ 32	04. 08. 2023	169,750	Դատական փուլում	3-րդ եռամսյակ
14	«Բազմաբերդ» ՍՊԸ Տնօրեն Տիգրան Մանուկյան	10. 07. 2023	Որոշում թիվ 33	04. 08. 2023	100,000	Դատական փուլում	3-րդ եռամսյակ
15	«Բազմաբերդ» ՍՊԸ Տնօրեն Տիգրան Մանուկյան	10. 07. 2023	Որոշում թիվ 34	04. 08. 2023	100,000	Դատական փուլում	3-րդ եռամսյակ
16	«Բազմաբերդ» ՍՊԸ Տնօրեն Տիգրան Մանուկյան	10. 07. 2023	Որոշում թիվ 35	04. 08. 2023	50,000	Դատական փուլում	3-րդ եռամսյակ

17	«Բազմաբերդ» ՍՊԸ Տնօրեն Տիգրան Մանուկյան	10. 07. 2023	Որոշում թիվ 36	04. 08. 2023	50,000	Դատական փուլում	3-րդ եռամսյակ
18	«Մելիորացիա» ՓԲԸ Սասուն Միրոյան	13. 07. 2023	Որոշում թիվ 39	11. 08. 2023	500,000	Դատական փուլում	3-րդ եռամսյակ
19	Ճամբարակ համայնքի ղեկավար Վազգեն Ադամյան	14. 07. 2023	Որոշում թիվ 38	11. 08. 2023	100,000	Դատական փուլում	3-րդ եռամսյակ
20	«Երևան ՋՕԸ» Գործադիր տնօրեն Սամվել Մելքոնյան	14. 07. 2023	Որոշում թիվ 41	18. 08. 2023	500,000	Դատական փուլում	3-րդ եռամսյակ
21	«Եվրոասֆալտ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Լիլի Հովհաննիսյան	17. 07. 2023	Որոշում թիվ 40	17. 08. 2023	150,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	3-րդ եռամսյակ
22	Քաղաքացի Ռաֆիկ Պողոսյան	08. 08. 2023	Որոշում թիվ 42	23. 08. 2023	150,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	3-րդ եռամսյակ
23	Ա/Ձ Արգիշտի Սաղաթելյան	20. 07. 2023	Որոշում թիվ 43	24. 08. 2023	Ոչ նյութական պահանջ /Ստուգման ակտ/	Ստուգման ակտն անփոփոխ թողնելու մասին	3-րդ եռամսյակ
24	«Եղեգնաձոր» ՋՕԸ	07. 08. 2023	Որոշում թիվ 43	29. 08. 2023	Ստուգման ակտ Տուգանք 1,000,000 Վնաս 5,037,400	Դատական փուլում	3-րդ եռամսյակ

25	Քաղաքացի Վահագն Վարդանյան	14. 07. 2023	Որոշում թիվ 37	09. 08. 2023	80,000	Վարչական բողոքը բավարարվել է	3-րդ եռամսյակ
26	«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ Տնօրեն Արմեն Բեգոյան **2 բողոք**	22. 08. 2023	Ելից 02/29.6/4/4974-2023	22. 09. 2023	Տուգանք 800,000	Վարչական բողոքը թողնվել է առանց քննության	3-րդ եռամսյակ
27	Քաղաքացի Եվգենյա Մխչյան	15.09.2023	Որոշում թիվ 46	13.10.2023	Տուգանք 50,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	3-րդ եռամսյակ
28	Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյան	16. 10. 2023	Որոշում թիվ 56	15. 11. 2023	500,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	4-րդ եռամսյակ
29	Ա/Ձ Արսեն Խալաթյան	16. 10. 2023	Որոշում թիվ 57	30. 11. 2023	500,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	4-րդ եռամսյակ
30	Ռադիկ Հարությունյան	13. 11. 2023	Որոշում թիվ 59	11. 12. 2023	Տուգանք 100,000 Վնաս 9,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	4-րդ եռամսյակ
31	«Եղեգնաձորի ՃՇՇ» ՍՊԸ Գրետա Ղարիբյան	08. 11. 2023	Որոշում թիվ 58	06. 12. 2023	100,000	Բողոքը բավարարվել է	4-րդ եռամսյակ

32	«Շիրակ» ՋՕԸ Գործադիր տնօրեն	15. 11. 2023	Որոշում թիվ 60	18. 12. 2023	500,000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	4-րդ եռամսյակ
33	Քաղաքացի Թևոս Սաֆարյան	11. 11. 2023	Ելից 06/29.6/4/6152-2023	16. 11. 2023	Տուգանք 100,000 Վնաս 18,000	Բողոքը թողնվել է առանց քննության	4-րդ եռամսյակ
34	Վանուշ Մարգարյան	07. 12. 2023	Որոշումը կայացվելու է 2024 թվականի հունվարին		150,000	Ընթացքի մեջ	4-րդ եռամսյակ
35	Քաղաքացի Թևոս Սաֆարյան	30. 11. 2023	Որոշումը կայացվելու է 2024 թվականի հունվարին		Տուգանք 100,000 Վնաս 18,000	Ընթացքի մեջ	4-րդ եռամսյակ
36	«Արաքսի Ավազան» ՍՊԸ Գագիկ Ավդալյան	11. 12. 2023	Որոշումը կայացվելու է 2024 թվականի հունվարին		Ոչ նյութական պահանջ /Ստուգման ակտ/	Ընթացքի մեջ	4-րդ եռամսյակ
37	Քաղաքացի Աբրահամ Աբրահամյան	25. 12. 2023	Որոշումը կայացվելու է 2024 թվականի հունվարին		Տուգանք 70,000	Ընթացքի մեջ	4-րդ եռամսյակ
38	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ Մարիաննա Շահինյան	25. 12. 2023	Որոշումը կայացվելու է 2024 թվականի հունվարին		Տուգանք 300,000	Ընթացքի մեջ	4-րդ եռամսյակ

Հավելված 2

Տեսչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթներ							
Հ/Հ	***Տնտեսավարողի անուն ազգանունը***	***Որոշման համարը***	***Որոշման ամսաթիվը***	***Վարչական տուգանքի չափը ՀՀ դրամ***	***Պետությանը պատճառված վնասի չափը ՀՀ դրամ***	***Կարգավիճակ***	***Եռամսակ***
1	«ԳՐԻՆ Ս» ՍՊԸ	Որոշում թիվ 2	20.01.2023	150.000		Վճարված Հարկադիր կարգով	1-ին եռամսյակ
2	«Գրին Ս» ՍՊԸ	Որոշում թիվ 3	20.01.2023	50.000		Վճարված Հարկադիր կարգով	1-ին եռամսյակ
3	«Գրին Ս» ՍՊԸ	Որոշում թիվ 4	20.01.2023	100 000		Վճարված Հարկադիր կարգով	1-ին եռամսյակ
4	«Գրին Ս» ՍՊԸ	Որոշում թիվ 7	07.02.2023		282 805	Վճարված Հարկադիր կարգով	1-ին եռամսյակ
5	«Գևորգյաններ» ՍՊԸ	Որոշում թիվ 8	10.02.2022	50.000		Վճարված	1-ին եռամսյակ
6	«Գևորգյաններ» ՍՊԸ	Որոշում թիվ 9	10.02.2023	100.000		Վճարված	1-ին եռամսյակ
7	«Գևորգյաններ» ՍՊԸ	Որոշում թիվ 10	10.02.2023		446 716	Վճարված	1-ին եռամսյակ

8	«ԷՍ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Որոշում թիվ 13	09.03.2023	50 000		Վճարված	1-ին եռամսյակ
9	«ԷՍ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Որոշում թիվ 14	29.03.2023		54 723	Վճարված	1-ին եռամսյակ
10	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Որոշում թիվ 19	26.04.2023	150 000		Վճարված	2-րդ եռամսյակ
11	«Արևմտյան Կանի» ՍՊԸ	Որոշում թիվ 21	28.04.2023	150.000		Վճարված	2-րդ եռամսյակ
12	«ՕՍՏ ՄԱՅՆԻՆԳ» ՓԲ	Որոշում թիվ 22	03.05.2023	100.000		Վճարված	2-րդ եռամսյակ
13	«Մալկես» ՍՊԸ	Որոշում թիվ 24	23.05.2023	150.000		Վճարված	2-րդ եռամսյակ
14	«Մալկես» ՍՊԸ	Որոշում թիվ 25	23.05.2032	100.000		Վճարված	2-րդ եռամսյակ

15	«ՎԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Որոշում թիվ 26	27.06.2023	150.000		Վճարված	2-րդ եռամսյակ
16	«ՎԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Որոշում թիվ 27	27.06.2023	100.000		Վճարված	2-րդ եռամսյակ
17	«Սև մարմար» ՍՊԸ	Որոշում թիվ 28	10.07.2023	50.000		Վճարված	3-րդ եռամսյակ
18	«Սև մարմար» ՍՊԸ	Որոշում թիվ 29	10.07.2023	100.000		Վճարված	3-րդ եռամսյակ
19	«Սև մարմար» ՍՊԸ	Որոշում թիվ 30	10.07.2023		129 120	Վճարված	3-րդ եռամսյակ
20	«ՎԻ ԷՆԴ ԷՄ» ՍՊԸ	Որոշում թիվ 45	08.09.2023	100.000		Վճարված Կներկայացվի ԱՆ ՀԿԱԾ	4-րդ եռամսյակ
21	«ԷՅ ԴԻ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Որոշում թիվ 47	18.10.2023	150.000		Վճարված	4-րդ եռամսյակ
22	«ԷՅ ԴԻ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Որոշում թիվ 48	18.10.2023	50.000		Վճարված	4-րդ եռամսյակ
23	«ԷՅ ԴԻ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Որոշում թիվ 49	18.10.2023	100.000		Վճարված	4-րդ եռամսյակ

24	«ԷՅ ԴԻ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Որոշում թիվ 50	18.10.2023		65 590	Վճարված	4-րդ եռամսյակ
25	«ԱՇ-ՎԱ» ՍՊԸ	Որոշում թիվ 51	20.10.2023	150.000		Վճարված	4-րդ եռամսյակ
26	«ԱՇ-ՎԱ» ՍՊԸ	Որոշում թիվ 52	20.10.2023	100.000		Վճարված	4-րդ եռամսյակ
27	«Բեսթ Մայնինգ» ՍՊԸ	Որոշում թիվ 53	20.10.2023	150.000		Վճարված	4-րդ եռամսյակ

Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցադիմումների, դրանց վերաբերյալ պատասխանների, Տեսչական մարմնի կողմից ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, Տեսչական մարմնի մասնակցությամբ ընթացքի մեջ գտնվող և ավարտված դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն

- Դատարան է ներկայացվել 13 հայցադիմում, որոնցից 3-ը՝ դրամական պահանջով 29 530 000 ՀՀ դրամ (աղյուսակը ստորև) իսկ 10-ը՝ առգրավված առարկան (զենք, լողունակ միջոցներ, ձկնորսական ցանցեր) բռնագրավելու պահանջով:
- Դրամական պահանջով ներկայացված հայցադիմումներով դատական գործերն ընթացքի մեջ են, առգրավված առարկան բռնագրավելու պահանջով հայցադիմումներով դատական գործերով բավարարվել են թվով 5 պահանջներ, 5-ն ընթացքի մեջ է:

Դրամական պահանջով ներկայացված հայցադիմումներ				
Գործի համարը	***Գումարի չափը ՀՀ դրամ***	***Հայցվոր***	***Պատասխանող***	***Կարգավիճակը***
ԱՎԴ2/0081/02/23	16 404 250	ԲԸՏՄ	«Սայեն Հայրապետյան» ԱՁ	Ընդունվել է վարույթ
ԱՐԴ/3422/02/23	1 655 761	ԲԸՏՄ	Արշակ Առաքելյան	Ընդունվել է վարույթ
ԵԴ2/22019/02/23	11 470 000	ԲԸՏՄ	«Լիլիթ-87» ՍՊԸ	Ընդունվել է վարույթ

- Ներկայացվել է թվով 29 վերաքննիչ բողոք:
- ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտերի դեմ բերվել է թվով 8 վճռաբեկ բողոք:
- Ներկայացվել են՝ 1-ին եռամսյակում՝ թվով 12 հայցադիմումի պատասխան և/կամ դիրքորոշում, 2-րդ եռամսյակում՝ 22 հայցադիմումի պատասխան և/կամ դիրքորոշում, 3-րդ եռամսյակում՝ 33 հայցադիմումի պատասխան և/կամ դիրքորոշում, 4-րդ եռամսյակում ներկայացվել են թվով 28 հայցադիմումի պատասխաններ և/կամ դիրքորոշումներ, ընդհանուր առմամբ 2023 թվականի ընթացքում 2023 թվականի և նախկինում վարույթ ընդունված գործերով ներկայացվել է 95 հայցադիմումի պատասխան կամ դիրքորոշում:
- Ընթացքի մեջ են ընդհանուր առմամբ 226 դատական գործ:
- Ավարտվել է թվով 19 դատական գործ:
- Թվով 7 դատական գործերով կայացվել են դատական ակտեր՝ հօգուտ տեսչական մարմնի:
- ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ բավարարվել է տեսչական մարմնի 1 վերաքննիչ բողոք: